Էջմիածին

2026, ՆՈՅԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 21 (713)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ





Հայրապետական մաղթանք Ամենայն Հայոց Հայրապետի օծման և գահակալության 27-րդ տարեդարձի առիթով

Նոյեմբերի 1-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության 27-րդ տարեդարձի առիթով Սուրբ Պատարագի ավարտին կատարվեց Հայրապետական մաղթանք: Ընկալյալ կարգի համաձայն՝ հավատացելոց երկրպագության համար դուրս էր բերվել նաև Սկևռայի սրբոց մասանց պահարանը:

Սրբազան արարողությանը ներկա էին Հայ Եկեղեցու թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ և ուխտավոր հայորդիներ:

Պատարագիչն էր Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը: Պատարագիչ Սրբազանն իր քարոզում շնորհավորեց Ամենայն Հայոց Հայրապետին օծման ու գահակալության տարեդարձի կապակցությամբ և անդրադարձավ Վեհափառ Հայրապետի հոգևոր, մշակութային, կրթական ու եկեղեցաշեն գործունեությանը՝ ի մասնավորի նշելով. «Այսօր ազգովի տոնում ենք գահակալության 27-րդ տարեդարձը Հայոց Հոր՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդի: Մեծագործ հայրապետներից մեկը, ով լսեց Տիրոջ պատվիրանները, կատարեց դրանք և, ըստ Տիրոջ խոսքի, արժանացավ ավելին՝ կանչվելով առաքելահաստատ Աթոռին բարձրագույն ծառայության:

Քսանյոթ տարի... Սա ժամանակի մի մեծ հանգրվան է, որն իր մեջ ամփոփում է ոչ միայն մեկ հայրապետի կյանքն ու ծառայությունը, այլև մեկ ժողովրդի, մեկ սերնդի նորագույն պատմության ամենահուզումնալից, վերելքներով ու հավատի հաղթանակներով լի շրջանը: Հայրապետը Լուսավորչի գահը ստանձնեց մի ժամանակաշրջանում, երբ Հայաստանն ու հայությունը նոր էին ոտք դրել անկախության դժվարին ճանապարհին: Այս 27 տարիները եղան ամբողջական նվիրումի, ամենօրյա աղոթքի, անխոնջ աշխատանքի և հայրենասիրության մի մեծ մատյան, որի ամեն էջը վկայություն է»:

Անդրադառնալով վերջին տարիներին Հայրենիքի և Եկեղեցու առջև ծառացած մարտահրավերներին՝ Սրբազան Հայրը նշեց. «Այսօր, այս սուրբ խորանի առջև, ի դեմս Հայրապետի, կենդանանում է մարգարեի խոսքը. «Տիրոջ Հոգին ինձ վրա է, դրա համար իսկ նա օծեց ինձ՝ ավետարանելու աղքատներին, բժշկելու սրտով բեկվածներին, գերիներին ազատություն քարոզելու և կույրերին՝ տեսողություն, հռչակելու Տիրոջ ընդունելի տարին...» (Եսայի 61:1):

Այս 27 տարիները հոգևոր «ընդունելի տարվա» հռչակման տարիներ են: Չնայած պատերազմներին, տնտեսական դժվարություններին, հոգևոր ու քաղաքական ցնցումներին՝ Հայրապետն անխոնջ կերպով իր ուսերին կրում է պատասխանատվության այս խաչը՝ աղոթելով ժողովրդի բարօրության, Հայրենիքի խաղաղության և Եկեղեցու միասնության համար: Քսանյոթ տարվա հայրապետական խաչ՝ ի սպաս ժողովրդի, աստվածային հանձնառության իրագործում՝ գործով ու կյանքով»:

Վերջում Մուշեղ Սրբազանը, դիմելով ներկաներին, հորդորեց միասնաբար աղոթել Երկնավոր Տիրոջը, որ Իր անպարտելի Աջով հաստատուն պահի մեր Սուրբ Եկեղեցու հիմերը, խաղաղություն շնորհի մեր հայրենիքին և երկար, արգասաբեր ու քաջառողջ տարիներ պարգևի մեր հոգևոր Հորը, որպեսզի նրա հայրապետական գավազանը շարունակաբար առաջնորդի հայ ժողովրդին դեպի փրկություն ու հավիտենականություն:

Այնուհետև Ամենայն Հայոց Հայրապետի օծման և գահակալության 27-րդ տարեդարձի առիթով Իջման սուրբ սեղանի առջև կատարվեց Հայրապետական մաղթանք՝ հանդիսապետությամբ Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանի:

Ներկաներն աղոթք բարձրացրին առ Աստված՝ Ամենայն Հայոց Հայրապետության, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անսասանության ու պայծառության, ինչպես նաև Նորին Սրբության քաջառողջության, կենաց արևշատության և բազմամյա գահակալության համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մալթայի Ինքնիշխան Մարտական Ուխտի նորանշանակ դեսպանին



Նոյեմբերի 3-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Մալթայի Ինքնիշխան Մարտական Ուխտի նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Նորին Գերազանցություն Մարկո Ռոմոլիին:

Ողջունելով դեսպանի այցը համայն հայության հոգևոր կենտրոն՝ Նորին Սրբությունը շնորհավորեց նրան դիվանագիտական առաքելությունն ստանձնելու կապակցությամբ և մաղթեց արդյունավետ գործունեություն:

Հանդիպմանը Հայոց Հովվապետը բարձր գնահատեց Մալթայի Ինքնիշխան Մարտական Ուխտի մարդասիրական գործունեությունն ու հայ ժողովրդին ցուցաբերած աջակցությունը՝ կարևորելով Հայաստանում Մարտական Ուխտի բարեսիրական և առողջապահական ծրագրերի շարունակականությունը: Նորին Սրբությունն անդրադարձավ նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սոցիալական, առողջապահական և հոգեխնամ առաքելությանը՝ մասնավորապես Արցախից բռնի տեղահանված ընտանիքների կարիքներին և նրանց ցուցաբերվող աջակցությանը:

Իր հերթին դեսպան Մարկո Ռոմոլին շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին ջերմ ընդունելության համար և ներկայացրեց Մարտական Ուխտի կողմից Հայաստանում իրականացվող առողջապահական և սոցիալական աջակցության ծրագրերը:

Զրույցի ընթացքում խոսվեց նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ մարդասիրական ոլորտում համագործակցության հնարավորությունների մասին, կարևորվեցին համատեղ ջանքերը՝ սոցիալական դժվարությունների առաջ կանգնած ընտանիքներին աջակցելու գործում:



Տ. Փառեն արքեպիսկոպոս Ավետիքյանին և Տ. Արամ արքեպիսկոպոս Աթեշյանին շնորհվել է «Սուրբ Ղևոնդ Երեց» առաջին աստիճանի շքանշան

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական սրբատառ կոնդակով «Սուրբ Ղևոնդ Երեց» առաջին աստիճանի շքանշան է շնորհվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երիցագույն միաբան Գերաշնորհ Տ. Փառեն արքեպիսկոպոս Ավետիքյանին և Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք ամենապատիվ Տ. Սահակ արքեպիսկոպոս Մաշալյանի միջնորդությամբ՝ Գերաշնորհ Տ. Արամ արքեպիսկոպոս Աթեշյանին՝ ի գնահատություն Հայոց Եկեղեցու անդաստանում երկարամյա գովարժան վաստակի և հավատավոր ժողովրդին մատուցած բացառիկ ծառայության:

Առաջիկա օրերին, ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում և Ստամբուլի Սուրբ Աստվածածին աթոռանիստ Մայր եկեղեցում շքանշանները կհանձնվեն մեծարյալ սրբազաններին:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի

«Ես եմ հովիւն քաջ». Լուսավորչի Աթոռի 132-րդ գահակալը

Անցուշտ, Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի քսանյոթամյա ծառայությունը կարելի է չափել կառուցված ու վերականգնված եկեղեցիներով, ձեռնադրված հոգևորականներով, բացված կրթօջախներով, սոցիալական ծրագրերով: Ըստ էության՝ հասարակությունն այսօր հենց այդպես էլ գնահատում է Հայրապետին: Սակայն պատմությունը նաև նրանով է հիշում հայրապետներին, թե ինչպես են վերջիններս դիմագրավել իրենց ժամանակի փորձություններ: Շուրջ երկու տասնամյակ նրան Շինարար Կաթողիկոս էին կոչում՝ վերականգնված ու նորակառույց եկեղեցիների, նոր կրթօջախների ու վերածնված վանքերի համար: Վերջին ութ տարիներին, երբ Եկեղեցու դեմ սանձազերծվեց բացահայտ հակաեկեղեցական արշավ, Ամենայն Հայոց Հայրապետը ստացավ մեկ այլ անուն ևս՝ Քաջ հովիվ:



Հալածանքներն ուղղվեցին Հայրապետի անձի, ընտանիքի անդամների, Եկեղեցու համար պայքար մղող հոգևորականների դեմ, հաջորդեցին կալանավորումները, սակայն Վեհափառը ոչ մի վայրկյան թույլ չտվեց, որ խաթարվի աշխարհասփյուռ թեմերի հոգևոր կյանքը, կիսատ չմնացին ընթացիկ ծրագրերը: Երբ փակում էին նրա տարիներով կերտած կառույցները, նա ավելի մեծ եռանդով էր գործում: Երբ փորձում էին նսեմացնել որևէ գործ, ավելի պատվով էր այն կատարվում: Եվ հենց այս տարիներին իր ողջ խորությամբ բացվեց Ավետարանի խոսքը. քաջ հովիվն իր անձը դնում է ոչխարների համար:

Ժառանգությունը

Ինչ էր ժառանգել Գարեգին Բ-ն իր նախորդներից, երբ 1999 թվականի հոկտեմբերի 27-ին Ազգային եկեղեցական ժողովն ընտրում էր Լուսավորչի Աթոռի 132-րդ գահակալին, իսկ նոյեմբերի 4-ին Մայր տաճարում Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Առաջինը, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի պատրիարքներն ու եպիսկոպոսաց դասը ձեռնադրում և օծում էին նորընտիր Հայրապետին:

Դժվարին ժամանակներ էին Հայաստանի համար. դեռ չէին վերականգնվել երկրաշարժից ավերված գյուղերն ու քաղաքները, չէին սպիացել պատերազմի վերքերը, իսկ սոցիալական ծանր պայմանները հյուծել էին հասարակությանը: Խորհրդային աստվածամերժության տասնամյակներն էլ իրենց ավերն էին գործել մարդկանց հոգիներում:

Հոգևորականների նոր սերունդը

Այսօր ասպարեզում գործող գրեթե բոլոր հոգևորականները կրթվել և ուխտ են ընդունել հենց Գարեգին Բ Կաթողիկոսի գահակալության շրջանում, սա է պատճառը, որ հոգևորականների մի մասը նրան Հայրիկ է կոչում: Գահակալության հենց առաջին տարիներից ուսյալ հոգևորականներ ունենալն առաջնային է համարել Գարեգին Բ Կաթողիկոսը: Թերևս սա է պատճառը, որ այսօր Գևորգյան հոգևոր ճեմարանի որևէ մանկավարժական ժողով չի գումարվում առանց Վեհափառի: Եվ այդ հետևողական աշխատանքի շնորհիվ էր, որ պետությունը կրթօջախը ճանաչեց աստվածաբանական համալսարան՝ բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակով:

Տարիների ընթացքում ճեմարանը վերականգնեց հայագիտական կրթություն տվող լավագույն հաստատության իր համբավը, իսկ ուսյալ հոգևորականների սերունդները շարունակում են արթուն պահել հոգևոր կյանքն ու ինքնության ոգին աշխարհի տարբեր անկյուններում և Հայաստանի հեռավոր գյուղերում: Քսանյոթ տարիների ընթացքում 492 քահանա է ձեռնադրվել, եպիսկոպոսական աստիճան է ստացել 47 եկեղեցական:

Դեռևս Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդության տարիներին Գարեգին արքեպիսկոպոսի ջանքերով Սևանում՝ Խրիմյան Հայրիկի հիմնած ընծայարանի փոքրիկ շենքում, ընդամենը տասը սանով սկսում է գործել Վազգենյան դպրանոցը: Կառուցվում են նոր մասնաշենքը և մատուռը: Այսօր դպրանոցը Սևանավանքի պատմական միաբանության ժամանակակից շարունակողն է:

Նույն առաքելությամբ 2011 թվականին Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ջանքերով և Թրբանճյան ընտանիքի բարերարությամբ Հառիճավանքում վերաբացվում է հոգևոր ընծայարանը: Այն իր գործունեությունը սկսում է ընդամենը ութ սանով: 2013 թվականին ընծայարանը ստանում է միջնակարգ կրթական ծրագրեր իրականացնելու պետական արտոնագիր: Այսօր Թրբանճյան ընծայարանում, պետական հանրակրթական ծրագրերին զուգահեռ, դասավանդվում են հոգևոր առարկաներ, և Հառիճավանքի դարավոր սրբավայրում կրկին կրթվում են ապագա հոգևոր սպասավորները:

Շինարար Կաթողիկոսը

132-րդ գահակալի գործունեության հաջորդ կարևոր ոլորտը եկեղեցաշինությունն է: Գարեգին Երկրորդն իր առաքելությունն է համարում վերականգնել խոնարհված եկեղեցիները, նորոգել ու բարեզարդել հնամենի սրբավայրերը, կառուցել նոր աղոթատներ: Հայրապետի նվիրական երազանքն է, որ յուրաքանչյուր բնակավայր ու թաղամաս ունենա աղոթքի իր տունը, և վերականգնվի համայնքային բնականոն կյանքը:

Գահակալության քսանյոթ տարիների ընթացքում Հայաստանում, Արցախում և Սփյուռքի հայկական գաղթօջախներում օծվում են տասնյակ վերականգնված ու նորակառույց եկեղեցիներ: Նորոգվում են հնամենի վանքերը, համալիրներում կառուցվում են կացարաններ, որտեղ բնակություն են հաստատում ուխտապահ միաբաններ: Այս ամենը համակարգում է Հայրապետի տնօրինությամբ ստեղծված Վանօրեից գրասենյակը Մայր Աթոռում:

Միայն Սուրբ Էջմիածնում կատարված փոփոխությունները բավական են՝ տեսնելու Վեհափառ Հայրապետի իրականացրած շինարարության ահռելի ծավալը: Կառուցվել են Սուրբ Վարդան և Հովհաննես Մկրտիչ մատուռ-մկրտարանը, Սուրբ Տրդատ կամարակապ մուտքը և Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բացօթյա խորանը: Կացարանային նոր մասնաշենքը միաբանների համար կեցության ու ծառայության հրաշալի պայմաններ է ստեղծել: Նորակառույց դիվանատանը տեղավորվել են տարբեր գրասենյակներ, ինչի շնորհիվ հնարավոր է դարձել համակարգել Մայր Աթոռի գործունեությունը բոլոր ոլորտներում:

Մայր տաճարի երկրորդ կյանքը

Պատմական նշանակություն ունի Միածնատէջ Մայր տաճարի լիակատար վերականգնումը: Աշխարհի ամենահին քրիստոնեական տաճարը միաժամանակ մի քանի ոլորտներում լուծումներ էր պահանջում՝ կառույցի ամրակայում, որմնանկարների պահպանում, ջրահեռացում և այլն:

2011 թվականին սկսվում են տաճարի հետազոտման և նախագծման աշխատանքները, 2013 թվականին նախագիծը համաձայնեցվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ, իսկ 2017 թվականի ամռանը մեկնարկում է վերականգնման և նորոգման բուն ընթացքը: Ամեն փուլ նոր խնդիրներ էր առաջադրում մասնագիտական խմբերին, և միայն Վեհափառի ամենօրյա հսկողության ու անզիջում կամքի շնորհիվ գրեթե տասը տարի տևած աշխատանքներից հետո տաճարը երկրորդ կյանք է ստանում: Բարեզարդ Մայր Տաճարը Գարեգին Բ Կաթողիկոսի ձեռամբ վերաօծվում և շքեղ հանդիսավորությամբ դռներն է բացում 2024 թվականի սեպտեմբերի 28-ին:

Օրհնության օրերը

Գարեգին Բ-ի կարևոր նախաձեռնություններից է օրհնության օրերի հռչակումը. Տյառնընդառաջը դառնում է նորապսակների, Սուրբ Սարգիս զորավարի տոնը՝ երիտասարդների, իսկ Ծաղկազարդը՝ մանուկների օրհնության օր: Այդ օրերին եկեղեցիներ հազարավոր մարդիկ են այցելում, ստանում հոգևոր դասի օրհնությունը, օրվա խորհրդին համահունչ տարբեր միջոցառումներ են կազմակերպվում: Եկեղեցական տոներին սուրբ մասունքները դուրս են բերվում սրբազան պահոցներից՝ հավատացյալներին օրհնություն ու զորություն բաշխելու:

Կրթություն և երիտասարդություն

2002 թվականին Եկեղեցու և պետության միջև ստորագրված համաձայնագրով միջին և ավագ դպրոցներում սկսվում է «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդումը: Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի և ՀՀ կրթության նախարարության համատեղ ջանքերով կազմվում են ուսումնական և մեթոդական ձեռնարկներ: Մայր Աթոռն է ստանձնում նաև նոր առարկայի ուսուցիչների վերապատրաստման գործը: Կազմակերպվում են գիտաժողովներ և սեմինարներ, որոնց հրավիրվում են նաև Սփյուռքի թեմերում գործող կիրակնօրյա դպրոցների ուսուցիչները:

Մայրաքաղաքում և հանրապետության տարբեր քաղաքներում բացվում են հայորդաց տներ: Այսօր ութ նորոգված ու բարեկարգ հաստատություններում գեղագիտական կրթություն և հոգևոր գիտելիք է ստանում մոտ 5 հազար երեխա:

Գարեգին Երկրորդի նախաձեռնությամբ ստեղծվում է Հայ Եկեղեցու համաշխարհային երիտասարդական միավորում (ՀԵՀԵՄ), որի աշխատանքները համակարգելու համար գործում է գրասենյակ: Երկու տարին մեկ անգամ աշխարհասփյուռ թեմերի երիտասարդական միությունների ներկայացուցիչները հավաքվում են հայրենիքում՝ մեկ հարկի տակ, մասնակցում աշխատաժողովների և հայրենաճանաչողական ծրագրերի:

Գիրք և լրատվություն

Վեհափառի գահակալության այս քսանյոթ տարիներին Մայր Աթոռը դարձել է Հայաստանի գրահրատարակչական կարևոր կենտրոններից մեկը: Նորոգված և ամբողջովին վերազինված տպարանում հրատարակվող աստվածաբանական, հոգևոր և գեղարվեստական գրականության ծավալը մի քանի անգամ բազմապատկվել է:

Դեռևս Արարատյան Հայրապետական թեմում Գարեգին արքեպիսկոպոսի առաջնորդական փոխանորդության տարիներին հիմնված «Շողակաթ» ստուդիան Վեհափառի կաթողիկոսության առաջին իսկ տարիներին վերածվում է հեռուստաընկերության, որը 2002 թվականից հեռարձակվում է որպես հոգևոր-մշակութային ալիք:

Եկեղեցին և պետությունը

Մայր Աթոռի և Հայաստանի կառավարության միջև 2002 թվականին ստորագրված մտադրությունների հուշագրով Եկեղեցի-պետություն հարաբերությունների զարգացման նոր հնարավորություններ են ստեղծվում: Հայ հոգևորականները՝ իբրև հոգևոր խորհրդատուներ, սկսում են ծառայել զինված ուժերում և ազատազրկման վայրերում: Հուշագրին հաջորդում է մի շարք այլ փաստաթղթերի ստորագրում, որոնցով Եկեղեցին հնարավորություն է ստանում գործունեություն ծավալելու նաև սոցիալական ու կրթական տարբեր ոլորտներում: Հոգևորականները սկսում են այցելել կալանավայրեր, հիվանդանոցներ, մանկատներ, ծերանոցներ և հոգևոր խնամք իրականացնել:

Արցախ

Վեհափառ Հայրապետին, ցավոք, վիճակված էր գահակալության շրջանում տեսնել պատերազմ և հայրենիքի մի հատվածի կորուստ: Ծանր օրերին Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հոգևոր դասի հետ ոչ միայն զորավիգ եղավ առաջնագծում կանգնած զինվորներին և նրանց ընտանիքներին, այլև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջոցով կազմակերպեց մարդասիրական օգնություն՝ սատարելով տեղահանված արցախցիներին, զոհվածների ընտանիքներին և կարիքավոր բոլոր հայորդիներին:

Հետպատերազմյան շրջանում Վեհափառի նախաձեռնությամբ և հոգածությամբ պատերազմում վիրավորում ստացած զինվորներն ուղարկվեցին Հնդկաստան՝ պրոթեզավորման, ինչը նրանց հնարավորություն տվեց վերադառնալ բնականոն կյանքի և վերագտնել ապագայի հանդեպ հավատը: Ջուգահեռաբար Հայրապետը միջազգային ատյաններում, միջեկեղեցական հանդիպումներում և պետությունների ղեկավարների հետ շփումներում հետևողականորեն բարձրաձայնում է արցախահայության իրավունքների, անվտանգության և Արցախի հոգևոր ու մշակութային ժառանգության պահպանման հարցերը՝ աշխարհի ուշադրությունը հրավիրելով հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավերներին:

Ավելին, քան կարելի է պատմել


Այս զուսպ ակնարկը Գարեգին Երկրորդի գահակալության տարեգրության ընդամենը մի քանի էջն է ներկայացնում: Քսանյոթ տարիների ընթացքում Մայր Աթոռի հովանու ներքո իրականացվել են և այսօր էլ շարունակվում են բազմաթիվ ծրագրեր՝ սոցիալական և բարեգործական, կրթական և մշակութային, միջեկեղեցական և միջազգային, Սփյուռքի թեմերի կյանքի կազմակերպման և հայրենիքի հետ կապերի ամրապնդման ուղղությամբ: Դրանցից յուրաքանչյուրն արժանի է առանձին անդրադարձի, և անհնար է բոլորն ամփոփել մեկ հոդվածի սահմաններում:

Սակայն նույնիսկ այս համառոտ ակնարկը բավական է՝ տեսնելու գործունեության մի ընդհանուր գիծ. ինչ էլ որ կառուցվի՝ եկեղեցի, կրթօջախ, թե գրադարան, Հայրապետի համար այն միշտ ծառայում է միևնույն նպատակին՝ հոգևոր կյանքի զորացմանը և ազգի միասնությանը:

Լուսինե Բալյան

«Արիացրու ինձ, Տէր, և ապավէն եղիր, տո՛ւր շնորհը՝ բարձրացնելու ինձ վստահված խաչը, կրելու հանուն Քո խաչի բազմիցս խաչված, խաչով հաղթանական հոտիդ առաջնորդության պատասխանատվությունը: Գիտեմ ծանրությունը Քո խաչի, գիտեմ և զորությունը նրա»:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոս



Օծվեց և բացվեց Սարատովի հայկական եկեղեցին

Սարատովի եկեղեցին օծելու և հանդիսավոր բացելու համար նոյեմբերի 7-ին Մոսկվայից Սարատով էր ժամանել Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդ տեր Եզրաս արք. Ներսիսյանը:

Եզրաս սրբազանի հանդիսապետությամբ նախ օծվեց Հայաստանից բերված մոտ երեք մետր բարձրությամբ խաչքարը՝ ի հիշատակ 1915 թվականի Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների, ապա կատարվեց եկեղեցու դռնբացեքի արարողությունը:

Նորաբաց եկեղեցում առաջինն Սուրբ և Անմահ Պատարագը մատուցեց Եզրաս սրբազանը: Նա Սրբալույս Մյուռոնով օծեց Սուրբ Սեղանը և եկեղեցին անվանակոչեց Սուրբ Մարիամ Աստվածածնի անունով:

«Կառուցելով այս եկեղեցին՝ դուք վկայեցիք ձեր հավատքը, սերն ու հավատարմությունն այն արժեքների հանդեպ, որոնք 1700 տարի պահել-պահպանել են հայ ժողովրդին»,– օրհնության իր խոսքում ասաց սրբազան հայրը:

Եկեղեցին օծվեց և բացվեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծման և գահակալության 27-րդ տարեդարձի առիթով: Սրբազան հայրը ցավ հայտնեց, որ ՀՀ իշխանությունների կողմից եկեղեցու և հոգևորականների դեմ կատարվող անօրինական գործողությունների պատճառով Վեհափառ Հայրապետը չի կարողանում երկրից դուրս գալ և աշխարհասփյուռ հայորդիներին իր օրհնությունը բաշխել:

Տոնական արարողությանը մասնակցում էին մարզային և քաղաքային իշխանության ներկայացուցիչներ, բազմաթիվ կրոնական կազմակերպությունների պատվիրակներ, Ռուսաստանի տարբեր քաղաքներից ժամանած ուխտավոր հայեր:

Սարատովի հայկական եկեղեցուն եզրաս սրբազանը Աստվածաշունչ մատյան նվիրեց: Նորաբաց եկեղեցու հոգևոր հովիվ է նշանակվել տեր Զարեհ քահանա Աշուրյանը:

Սարատովի հայկական եկեղեցու ճարտարապետը լուսահոգի Արտակ Ղուլյանն է, որմնանկարների ու սրբապատկերների հեղինակը՝ մանրանկարիչ Լևոն Զաքյանը: Եկեղեցական համալիրն իր կանաչապատ տարածքով զբաղեցնում է 1 հա, ներառում է կիրակնօրյա դպրոցի և մշակութային կենտրոնի շենքը: Եկեղեցին ունի նաև մանկական խաղահրապարակ:



Հայկական եկեղեցական ճարտարապետական ոճով կառուցված աղոթատունը վեհաշուք տեսքով կանգնած է որպես հավատի ու միասնության խորհրդանիշ, որպես փոքրիկ Հայաստան՝ կառուցված հայրենի քարով և անափ սիրով:

Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի մամլո դիվան

Երանելի տեր Ատոմ Անձևացյաց եպիսկոպոսի ներբողը՝ նվիրված Հովհաննես Կարապետին [Մկրտչին]

Ատոմ Անձևացին Թ–ժ դարերի հեղինակ է: Նրա ներբողն աշխարհաբար ներկայացվում է առաջին անգամ՝ Հակոբ Քյոսեյանի փոխադրությամբ:

Պեծ Կարապետի հիշատակը տոնելով՝ գովենք կուսության սխրանքը՝ հիշատակելով [նրա] սրբությունն ու թվելով բոլոր այն առաքինությունները, որոնցով և իր բովանդակ բարեմասնությամբ նա ինքն աստվածացավ: Եվ այս հույժ զարմանալի է. սրա մասին է խոսքը, քանզի մեր էությունների Արարիչը սկզբնավորելով կերպավորեց սրան [իբրև] օրինակ և փրկություն մեզ: Սա էացավ սուրբ ծնողներից՝ Սուրբ Հոգու թելադրությամբ: Կյանքի ծառ էր, որ բարձրանում էր արդարության պտղով, սակայն ըստ բնության և քաղաքի՝ համբավատենչ Պաղեստին գավառից էր՝ լեռնային և դաշտային, պղնձածին և բյուրաբեր, կաթը և մեղրը՝ [նրան] կերակուր: Եվ այս եղավ ի լրումն հայրերի և հայրապետների բաղձանաց՝ քահանայական մեծ իշխանությամբ, տերունական բնակավայրով՝ նույն [քահանայական] սեռին [պատկանելով] նույնական ունակությամբ զարգանալով: Բայց նաև գերագույն հրաշակերպությամբ մինչև Արդարության ծագելը (Արդարության Արեգակի՝ Քրիստոսի ծագելը – *Հ. Ք.*) ճշմարտվեց երկակի նշանակությամբ՝ մարգարե և քահանա, առաքյալ և ձայն ավետարանական: Սակայն սրանց մեջ խորամուխ [լինելու համար հարկ է] նայել առաջինա բաներին և այնժամ այն կուսական հոգին ինձ մոտիկ կլինի: Եվ արդ՝ բոլոր աստվածասեր հոգիներին կոչ եմ անում հոգևոր սխրանքի: Այսօր ուրախություն ջամբող հարսանեկան ճաշի մտա՝ վայելելու համար սեղանին դրված սրբի բազմերանգ գործերը: Ոչ միայն ստորադրյալներս և բովանդակ մարդկությունը, որոնք քրիստոնյա են, այլև հրանյութ զորությունները (հրեշտակները.– *Հ. Ք.*), այս մեծ օրը փառաբանելով անհասանելին երից սրբասացությամբ և անուշահոտ պաշտամունքով, նույն օրը տոնախմբում են ամենամյա շրջադարձությամբ:

Սրա հետ և սա՝ իբրև նոր Սիոն, վսեմորեն վայելելով մայրական գգվանքը, խնդում և կայթում է՝ իր սխրագործության լուսեղեն պարածածկումով հանդիսանալով պարծանաց թագ ու պսակի անդրանիկը: Սրանով սքանչանալով՝ նահատակության դիմեցին առաքյալներն ու մարգարեները, վարդապետներն ու կուսանաց դասը. առաքյալները [հանձին նրա ունենալով] շնորհատուին և առաքյալին, մարգարեները՝ մարգարեին և առաքյալին, վարդապետները՝ ուսուցչին և զգաստացնողին, կույսերը՝ իրենց նմանին և զգաստության մորը, քանզի բոլորի [մեջ] հաստատեց լիալիր սրբություն՝ [նրանց դարձնելով] իմաստուններ և կատարյալներ:

Աղաչում եմ ձեզ, ո՛վ մարդիկ, և արժանիքներին ի տրիտուր բարբառում ճշմարտության պարկեշտ շուրթերով: Սրա համար է բացատրում Իմաստության խոսքը. «Ոսկի խնձոր և սարդիոն ամենապայծառ» (հմմտ. Առակ. Իե 11–12), որ ունկնդրող լսելիքն է: Սրանով են երկրայիններս երկնայիններից տարբերվում, սրա մասին է նաև մարգարեի խոսքը. «Ձայն բարբառոյ» (Ես. Խ 3). որտե՞ղ արդյոք: Անապատում: Քանզի սրանով բոլոր անապատացյալ հոգիները կընդունեն սուրբ սիրտ և արգանդում նորոգված ուղիղ հոգի ու պտուղ՝ պատշաճավոր և արդյունարար: Հայր Աստծու Քնարն է բարոյական, Քնարը՝ քրիստոսական, [Սուրբ] Հոգու շնորհի քնարը բարոյական՝ սուրբ արվեստագետի յոթնաշարժ ներգործման (Սուրբ Հոգու յոթ շնորհների.– *Հ. Ք.*), որով ժողովում և շաղկապում, մեկտեղում է տարաբնակ հեռավորներին [Սուրբ] Հոգու լոգարանում և քրիստոսյան Սելովամում: Այս ոչ թե Որփեոսի դիվաբախ կատաղությամբ բռնված մոլեռանդներից, այլ սրբոց բյուրավոր բանակից է հնչում: (Ըստ հին հունական դիցաբանության՝ Որփեոսը հռչակված էր իբրև երգիչ ու երաժիշտ, որի արձակած հնչյուններն ունեին մոգական ուժ, որին հնազանդվում էին ոչ միայն մարդիկ, այլև աստվածները և նույնիսկ բնության տարրերը – *Հ. Ք.*):

Տապանակ բանական, տապանակ լրության Հնի և Նորի (Կտակարանների.– *Հ. Ք.*)՝ ոչ տասնաբանյա գրությամբ, այլ [լինելով] համակ օրենսդիր և ներունակ հոգի, համաձայն աստվածային գետաբուղխ սահմանումի՝ արարված ի բարեբաստություն քրիստոնյաների: Սա Քրիստոսից քրիստոնյաների եկեղեցուն շնորհվեց՝ հաստատելով իբրև լրումն նորոգության: Նա՝ Փեսա (Քրիստոս), և սա՝ Խաչեղբայր. ո՛վ զարմանք, անմնացորդ, և իրապես ընթացավ ըստ



մարմնական կրքերի, բայց [առանց] մեղքի: Մինչդեռ Իսրայելը հեղեղում էր բազմակուտակ մեղքեր, ինչպես նույն կապարե չարությունը կրող, մեղքերի թթու ողկույզին ճգտող նախնիք (հմմտ. Երեմ. ԼԱ 29): [Սրա] սուրբ և անհպելի անձը անապատում, համաձայն Դավթի օրինակի, Աստծու հետ էր խոսում հանդարտաբար: Եվ նա, զերծ այս կենցաղի ապականությունից, երգում էր ըղձական հոգով. «Քեզ համար եմ կանխորոշված իմ մոր որովայնից» (Սաղմ. ԻԱ 11), որ ոչ միայն արտաբերվել, այլև խոսքն այդ ականջներն իսկ չեն կարող ընկալել:

Արդ, ինչ է բնությանն անհրաժեշտ մարմնի կերակուրը: Ավետարանում ասված է՝ մեղր վայրի: Եվ ինչպե՞ս կարողացավ, զգաստաբար տոկալով, մարմինը սրանով բավարարվել. այն, ինչը սուրբն իր կյանքում սովորական դարձրեց: Ավելին՝ ըստ օրինաց կերակուրի՝ ոչ միայն հացով, այլև Աստծու խոսքով ապրեց՝ [լինելով] օրենքից վեր:

«Ձայն բարբառոյ յանապատի» երկրորդեց Ավետարանիչը (Մատթ. Գ 3, Ղուկ. Գ 4, Հովհ. Ա 23): «Ձայն բարբառոյ». հայտնապես ի մի բերված այս խոսքն առավել ահավոր է և մեծաձայն, քան մեկմեկու բախվող ամպերի ճայթյունը: Եվ մինչև աշխարհի ծայրն է արձակում ճառագայթները՝ ընդօրինակելով մեծ լուսատուին, որով վանում է չարի հրամշուշ տրամադրությունը: Սրա մասին կերգվի քերթողաբար: Եվ [ըստ] Սողոմոնի՝ [նա էր] շատերի մեջ ընտրված, որ նման էր շուշանաց հովտում առատալիր արտի բուրավետ որդիներին (տե՛ս Երգ Բ 1, 16): Ահա իր կամքով աղոտացյալ [լույսը] Հոր հրավերի կոչն է անում անապատից: Եվ հրամանը երկնքից ընդունեց մինչև ալեծավալ Հորդանանի կողմը՝ ծաղկելով գույնով և նրբանալով շքեղաճոխ հասակով: Այնտեղ երկուսին երեքի (Սուրբ Երրորդության) մեջ էր տեսնում, որին չարժանացան հրակերպ [էակներն] իսկ (հրեշտակները.– *Հ. Ք.*): Նրանց մեջ էր նաև Հայրը [որին տեսնում էր] հոգու աչքի սուրբ և մաքուր հայացքով, ինչպես երբևէ [տակավին որովայնում] Որդուն էր երկրպագում որովայնից որովայն, նույնպես և Հայր Աստծուն էր [երկրպագում] երկրի արգանդից: Եվ եթե ի պատիվ Աստծու խմբված հրեշտակներն իսկ թևածելով ծածկում են իրենց դեմքը, և [բաժանված են] տարածությամբ, ապա որչա՞փ առավել մաքուր էր անեղի [Քրիստոսի] ամենասուրբ գագաթին հպված և լիալրված ձեռքն այն: Եվ նա ինքն էր քահանա մշտնջենավոր ոչ միայն Սրբություն Սրբությանց մեջ, այլև հենց Երկնքում՝ Հայր Աստծու դիմաց: Այսպիսին է սրբի պատիվը, այսպիսին է սրա կերպարը: Այսպիսի գերապանծ փառքով մեծարվեց՝ վառվելով նեղության հրով, և փառաբանվեց համաձայն Պողոսի. երբեմն՝ աղոտացած [լույս] և երբեմն՝ վարդապետ, որին հարց էին ուղղում զինվորները, երբեմն՝ անարժան կոշիկի կապերն արձակելու, և երբեմն՝ ձեռնադրող, որով ճգնակյացները բազմացան, երբեմն՝ կուսակրոն և տռփանքը սաստող և մյուս կողմից՝ շատերին որդեգրող ջրով և հոգով, անդրանիկը տաճարում, անդրանիկը Նոր Սիոնում՝ սուրբերի մեջ: Եվ, ի հավելումն փառքի, Տիրոջից այս վկայությունը ստացավ, [թե] կանանցից ծնվածների մեջ չկա սրանից մեծը (տե՛ս Ղուկ. Է 28): Եվ մեզ համար հավիտենական ուրախություն է սրբիս մեծարանքով հիշելը: ➥ *էջ 6*



Ի՞նչ է արդարութիւնը

Արդիկ յաճախ արդարութեան մասին կը խօսին, արդարութեան մասին կը գրեն, արդարութեան մասին կը քարոզեն ու կը ճառախօսեն, բայց քիչերն են, որոնք կը փորձեն իսկապէս հասկնալ եւ ըմբռնել, թէ ինչ է արդարութիւնը: Մանաւանդ ներկայ ժամանակներուն, երբ այս բառը դարձած է ամէնէն շատ գործածուող հասկացութիւններէն մէկը, սակայն միեւնոյն ժամանակ՝ ամէնէն աւելի աղաւաղուած հասկացողութիւններէն մին է: Արդարութեան անունը կը տրուի տարբեր երեւոյթներու, զայն կը պահանջեն տարբեր կողմեր, իսկ երբեմն նոյնիսկ իրարու հակասող դիրքորոշումներ կը փորձեն իրենց ճշմարտացիութիւնը հիմնաւորել արդարութեան անուան տակ:

Աւելին՝ որոշ մարդիկ արդարութեան գաղափարը կը գործածեն որպէս վարագոյր՝ իրենց սխալները, թերութիւնները կամ նոյնիսկ անիրաւութիւնները ծածկելու համար: Ոմանք արդարութիւն կը պահանջեն ուրիշներէն, սակայն իրենք պատրաստ չեն արդար ըլլալու իրենց խօսքին, վարքին կամ դատողութիւններուն մէջ: Ուստի երբ արդարութիւնը դարձած է մեր օրերու ամէնէն շատ շահագործուած բառերէն մէկը, անհրաժեշտ է վերադառնալ անոր իսկական իմաստին եւ փորձել հասկնալ, թէ ինչ կը նշանակէ արդարութիւն՝ ըստ Աստուծոյ, ըստ մարդկային իմաստութեան եւ ըստ հոգեւոր փորձառութեան:

Արդարութեան տարբեր սահմանումներ ու ընկալումներ գոյութիւն ունին, սակայն քրիստոնեային համար առաջնայինը աստուածաշնչական ընկալումն է: Սուրբ Գիրքը արդարութիւնը չի սահմանափակեր դատական որոշումներով կամ օրէնքներու գործադրութեամբ: Աստուածաշունչին մէջ արդարութիւնը նախ եւ առաջ կեանքի կերպ է, հոգեւոր վիճակ է եւ Աստուծոյ կամքին համապատասխան ապրելու ընթացք է:

Միքիա մարգարէն շատ յստակ կերպով կը ներկայացնէ Աստուծոյ պահանջը մարդէն. «Պատմուեցաւ քեզի, ով մարդ, թէ ինչ է բարին, եւ ինչ կ'ուզէ քեզմէ Տէրը. իրաւունք հաստատել, ողորմութիւն սիրել եւ պատրաստ ըլլալ քու Տէր Աստուծոյ ետեւէն երթալու» (Միքիա 6.8):

Այս համարը բաւարար է հասկնալու համար, որ արդարութիւնը միայն իրաւունք պահանջել չէ: Անիկա իրաւունք հաստատել է, ողորմութիւն սիրել եւ Աստուծոյ հետ քալել է: Այլ խօսքով՝ արդարութիւնը չի կրնար գոյութիւն ունենալ առանց ճշմարտութեան, սիրոյ եւ խոնարհութեան:

Նոյն գաղափարը կը շեշտէ նաեւ Ամոս մարգարէն, երբ կը գոչէ. «Թող յորդի իրաւունքը ինչպէս ջուր եւ արդարութիւնը՝ ինչպէս անհուն հեղեղ» (Ամոս 5.24):

Այս խօսքերը ուղղուած էին այն մարդոց, որոնք կրօնական արարողութիւններ կը կատարէին, բայց իրենց կեանքին մէջ արդարութիւն չկար: Աստուած անոնց կը յիշեցնէ, որ արտաքին պաշտամունքը արժէք չունի, եթէ մարդուն սիրտին մէջ արդարութիւն, ճշմարտութիւն եւ իրաւունք չկան:

Առակաց գիրքը նոյնպէս կ'ըսէ. «Արդարութիւն գործելը եւ ճշմարտութիւն խօսիլը աւելի հաճելի են Տիրոջ, քան զոհերու արիւնը» (Առակ 21.3):

Այսինքն՝ Աստուած աւելի կը գնահատէ արդար կեանքը, քան արտաքին կրօնականութիւնը: Մարդ կրնայ աղօթել, մոմ վառել, ծոմ պահել կամ զոհ մատուցել, սակայն եթէ անոր մէջ արդարութիւն չկայ, այդ բոլորը կը կորսնցնեն իրենց իսկական արժէքը:

Նոյն ուսուցումը կը շարունակէ Տէր Յիսուս Քրիստոս: Լեռան քարոզին մէջ Ան կը յայտարարէ. «Երանի՛ անոնց, որոնք արդարութեան քաղցն ու ծարաւը ունին, որովհետեւ անոնք պիտի յագեցնան» (Մատթ. 5.6):

Քաղցն ու ծարաւը մարդկային ամէնէն ուժեղ պահանջներէն են: Երբ Քրիստոս կը խօսի արդարութեան քաղցի եւ ծարաւի մասին, կը հասկցնէ, որ մարդուն հոգին նոյնքան պէտք ունի արդարութեան, որքան մարմինը՝ հացի եւ ջուրի:

Ան նաեւ կը թելադրէ. «Նախ խնդրեցէք Աստուծոյ Արքայութիւնը եւ Անոր արդարութիւնը» (Մատթ. 6.33):

Ուշադրութիւն դարձնենք, որ Քրիստոս չ'ըսեր. «Նախ փնտռեցէք հարստութիւնը, յաջողութիւնը, փառքը կամ իշխանութիւնը»: Ան կ'ըսէ. «Նախ փնտռեցէք Աստուծոյ արդարութիւնը» եւ ապա ամէն ինչ ձեզի պիտի յաւելուի: Ուրեմն, արդարութիւնը նախապայման է, որ Աստուծոյ օրհնութիւնը իրականանայ մեր կեանքին մէջ:

Արդարութեան մասին Աստուածաշունչը միայն չէ խօսած, այլեւ մարդկութեան մեծագոյն մտածողները:

Պղատոն, որ արեւմտեան փիլիսոփայութեան հիմնադիրներէն մէկն է, արդարութիւնը կը տեսնէ որպէս ներդաշնակութիւն: Ան կը գրէ. «Արդարութիւնը այն է, երբ իւրաքանչիւր մարդ կը կատարէ իրեն յատուկ գործը եւ չի միջամտեր ուրիշին գործին»:

Այս սահմանումը մեզի կը յիշեցնէ, որ արդարութիւնը նաեւ կարգ ու կանոն է: Երբ մարդ իր պարտականութիւնը գիտէ եւ կը կատարէ, իսկ ուրիշին իրաւունքները կը յարգէ, հասարակութիւնը կը դառնայ ներդաշնակ եւ կայուն:

Արիստոտէլ մէկ քայլ աւելի առաջ կ'երթայ եւ կը գրէ. «Արդարութիւնը կատարեալ առաքինութիւնն է, բայց ոչ թէ ինքն իր մէջ, այլ ուրիշներու նկատմամբ»:

Այս խօսքերուն մէջ մեծ ճշմարտութիւն կայ: Մարդ կրնայ իր մասին բարձր կարծիք ունենալ, սակայն իր արդարութիւնը կը դրսեւորուի այն ժամանակ, երբ ան կը յարաբերի ուրիշներուն հետ: Արդարութիւնը միշտ կապուած է մարդոց միջեւ յարաբերութիւններուն:

Հռոմէացի մեծ մտածող Կիկերոն կը գրէ. «Արդարութեան առաջին պահանջը այն է, որ ոչ ոք վնասէ ուրիշին, եթէ անոր դէմ անիրաւութիւն գործուած չէ»:

Այս սկզբունքը մինչեւ այսօր կը մնայ մարդկային իրաւական համակարգերու հիմքերէն մէկը: Մարդկային արժանապատուութեան յարգանքը արդարութեան անբաժանելի մասն է:

Էմմանուէլ Կանտ իր բարոյագիտական ուսուցման մէջ կը յայտարարէ. «Գործէ այնպէս, որ մարդը միշտ նպատակ ըլլայ եւ երբեք միայն միջոց չըլլայ»:

Այս խօսքերը մեզի կը զգուշացնեն, որ մարդը երբեք չի կրնար օգտագործուիլ շահի, փառքի կամ իշխանութեան համար: Ամէն մարդ արժէք ունի ինքնին, որովհետեւ ստեղծուած է Աստուծոյ պատկերով եւ նմանութեամբ:

Ժան Ժագ Ռուսօ արդարութեան հիմքը կը տեսնէ հասարակական պատասխանատուութեան մէջ: Ան կը գրէ. «Օրէնքները արդար են, երբ անոնք կը բխին ընդհանուր կամքէն եւ կը ծառայեն ընդհանուր բարիքին»:

Այս միտքը մեզի կը յիշեցնէ, որ իսկական արդարութիւնը երբեք միայն անհատական շահ չի հետապնդեր, այլ կը ձգտի ընդհանուր բարիքին:

Արդարութեան մասին ամենախոր մտածումները կը գտնենք նաեւ Եկեղեցւոյ հայրերուն մօտ, անոնց ապրած փորձառութիւններուն մէջ:

Սուրբ Օգոստինոս կը գրէ. «Արդարութիւնը այն առաքինութիւնն է, որ իւրաքանչիւրին կու տայ այն, ինչ իրեն կը պատկանի»:

Առաջին հայեացքով այս սահմանումը պարզ կը թուի, բայց իրականութեան մէջ անիկա շատ խոր է: Արդարութիւն կը նշանակէ տալ մարդուն այն, ինչ իրաւամբ իրեն կը պատկանի՝ պատիւ, յարգանք, իրաւունք, սէր եւ արժանապատուութիւն:

Սուրբ Օգոստինոս ուրիշ տեղ մը աւելի սուր կերպով կը գրէ. «Առանց արդարութեան պետութիւնները ինչ են, եթէ ոչ մեծ աւազակախումբեր»:

Այս խօսքերը այսօր ալ կը հնչեն նոյնքան արդիական, որքան տասնվեց դար առաջ: Որքան ալ պետութիւն մը հզօր ըլլայ, եթէ արդարութիւն չկայ, անոր հիմքերը խարխուլ են:

Թովմաս Աքուինացի՝ քրիստոնէական աստուածաբանութեան մեծագոյն ներկայացուցիչներէն մէկը, կը սահմանէ. «Արդարութիւնը հաստատ եւ մնայուն կամքն է՝ իւրաքանչիւրին տալու իր իրաւունքը»:

Ուշադրութեան արժանի է «մնայուն կամք» արտայայտութիւնը: Արդարութիւնը անցողիկ զգացում չէ: Անիկա կայուն որոշում է, հետեւողական ընթացք է եւ կեանքի սկզբունք:

Ղպտի եկեղեցւոյ ճգնաւոր հայրերէն Ֆիլիմոն Մակարացին արդարութեան եւ սիրոյ յարաբերութիւնը կը բացատրէ բացառիկ գեղեցկութեամբ. «Արդարութիւնը առանց սիրոյ ամէն ինչի մէջ պարտուած է, սակայն սէրը երբեք չի պարտուիր, նոյնիսկ եթէ արդարութեան չի նայիր: Ով որ միայն արդարութեամբ կ'ընթանայ, սէրը կը կորսնցնէ, սակայն ով որ սիրով կ'ընթանայ, արդարութիւնը կը շահի»:

Այս խօսքերը մեզի կը յիշեցնեն, որ քրիստոնէական արդարութիւնը երբեք չոր օրէնք կամ անողորմ դատաստան չէ: Ան միշտ կ'ուղեկցի սիրոյն, գթութեան եւ ներողամտութեան:

Նոյն միտքը կ'արտայայտէ նաեւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, երբ կը գրէ. «Արդարութիւնը եւ իրաւունքը աստուածադիր սկիզբ ունին եւ Ս. Գիրքի հիմնական սկզբունքներէն են՝ սիրոյ, յոյսի եւ հաւատքի հիմնարար արժէքներուն հետ»:

Վեհափառ Հայրապետը արդարութիւնը չի բաժներ սիրոյ, հաւատքի եւ յոյսի արժէքներէն: Ան կը շեշտէ, որ հասարակական համերաշխութիւնը կարելի է հաստատել միայն այն ժամանակ, երբ իրաւունքն ու օրէնքը անխտրական կերպով կը գործադրուին եւ միաժամանակ կ'ուղղորդուին քրիստոնէական սիրոյ ոգիով: Ան կը գրէ. «Արդարութիւնը եւ օրինապարգութիւնը մեր կեանքին մէջ ամուր պիտի մնան՝ ինչպէս սահմանուած օրէնքներու պահանջով, այդպէս ալ քրիստոնէական սիրոյ ոգիով՝ նպաստելով հասարակութեան համախմբումին եւ միաբանութեան: Հանրութեան համերաշխութիւնը արդարութեամբ հաստատուն է, իրաւունքի եւ օրէնքի անխտրական գործադրմամբ, եւ վկայութիւնն է տէրունապատուէր սիրոյ եւ հաւատքի դրսեւորումին»:

Այս բոլոր մտածումներուն, սահմանումներուն եւ վկայութիւններուն լոյսին տակ կարելի է վստահաբար եզրակացնել, որ արդարութիւնը շատ աւելի խոր, լայն եւ համապարփակ հասկացութիւն է, քան մարդիկ սովորաբար կը պատկերացնեն կամ կը ներկայացնեն: Անիկա միայն դատարաններու, օրէնքներու, սահմանադրութիւններու կամ քաղաքական կարգախօսներու խնդիր չէ: Արդարութիւնը կեանքի ամբողջական փիլիսոփայութիւն է, բարոյական կեցուածք է, հոգեւոր վիճակ է եւ մարդկային գոյութեան հիմնական հիմնասիւներէն մէկը: Անիկա կը սկսի մարդու ներաշխարհէն, խիղճէն եւ մտածողութենէն, ապա կ'անդրադառնայ ընտանիքին, հասարակութեան, պետութեան եւ ի վերջոյ իր լրումը կը գտնէ Աստուծոյ հետ մարդու յարաբերութեան մէջ:

Իրականութեան մէջ արդարութիւնը նախ եւ առաջ ինքնաքննութեան հարց է: Մարդիկ յաճախ կը պահանջեն, որ ուրիշները արդար ըլլան իրենց հանդէպ, սակայն շատ աւելի քիչ են անոնք, որոնք կը հարցնեն, թէ իրենք արդեօք արդա՞ր են ուրիշներուն նկատմամբ: Մենք կը դժգոհինք, երբ մեր իրաւունքները կը խախտուին, բայց յաճախ չենք նկատեր, որ մեր խօսքերով, վերաբերմունքով կամ որոշումներով մենք եւս կը խախտենք ուրիշներու իրաւունքները: Արդարութիւնը սկսելու համար մարդ պէտք է նախ իր սեփական խիղճին առջեւ կանգնի եւ անկեղծօրէն գնահատէ ինքզինք:

Արդարութիւնը նաեւ ճշմարտութիւնը ընդունելու կարողութիւնն է: Մենք յաճախ արդարութիւնը կը շփոթենք մեր անձնական շահերուն կամ նախասիրութիւններուն հետ: Այն, ինչ մեզի ձեռնտու է, կը կոչենք արդար, իսկ այն, ինչ մեզի դէմ է, կը կոչենք անարդար: Սակայն ճշմարիտ արդարութիւնը անկախ է մեր շահերէն, զգացումներէն եւ նախասիրութիւններէն: Անիկա կը պահանջէ, որ մարդ կարողանայ ճշմարտութեան աչքերով նայիլ իրողութիւններուն, նոյնիսկ այն ատեն, երբ այդ ճշմարտութիւնը իրեն հաճելի չէ կամ իր անձնական պատկերացումներուն չի համապատասխաներ:

Այսօրուան աշխարհին մէջ արդարութեան մասին խօսակցութիւնները շատ են, սակայն արդարութեան գործադրութիւնը՝ շատ աւելի սակաւ: Մարդիկ բարձրաձայն կը պահանջեն իրաւունքներ, բայց քիչ կը խօսին պարտականութիւններու մասին: Մինչդեռ իրական արդարութիւնը չի կրնար գոյութիւն ունենալ, եթէ իրաւունքներն ու պարտականութիւնները իրարմէ բաժնուին: Հասարակութիւն մը չի կրնար արդար ըլլալ, եթէ անոր անդամները միայն իրենց իրաւունքները պահանջեն, բայց պատրաստ չ'ըլլան կատարել իրենց պարտականութիւնները ընտանիքին, հասարակութեան, հայրենիքին եւ Աստուծոյ հանդէպ:

Արդարութիւնը նաեւ փոխադարձ յարգանքի հիմքն է: Այն ընտանիքը, ուր ամուսինները կը յարգեն իրարու արժանապատուութիւնը, աւելի կայուն կ'ըլլայ: Այն հասարակութիւնը, ուր քաղաքացիները կը յարգեն իրարու իրաւունքները, աւելի խաղաղ կ'ըլլայ: Այն պետութիւնը, ուր օրէնքը հաւասարապէս կը գործադրուի բոլորին նկատմամբ, աւելի ամուր եւ վստահելի կ'ըլլայ: Իսկ այն ժողովուրդը, որ արդարութիւնը կը դարձնէ իր ազգային եւ բարոյական կեանքի հիմքը, աւելի դիւրութեամբ կը յաղթահարէ իր առջեւ ծառացած փորձութիւններն ու դժուարութիւնները:

Քրիստոնէական ըմբռնումով արդարութիւնը անբաժանելի է սէրէն եւ ողորմութենէն: Ահա թէ ինչու Սուրբ Գիրքը արդարութիւնը երբեք չի ներկայացներ որպէս սառն եւ անզգայ դատաստան: Աստուծոյ արդարութիւնը միշտ միացած է սիրոյն, գթութեան եւ ներողամտութեան: Ասոր վառ ապացոյցն են Սաղմոսերգուին հետեւեալ տողերը. «Մեր մեղքերուն համեմատ չվարուեցաւ մեզի հետ, ոչ ալ մեր անօրէնութեան համեմատ հատուցեց մեզի: Այլ ինչքան բարձր է երկինքը երկրէն, այդքան զօրաւոր է Տիրոջ ողորմութիւնը Իրմէ երկիւղ կրողներուն վրայ» (Սաղմ. 102.10—11): Երբ մարդ արդարութեան անունով կը մոռնայ սէրը, շատ յաճախ կը դառնայ խիստ, դատապարտող եւ անողորմ: Իսկ երբ սէրը կը բաժնուի արդարութենէն, անիկա կրնայ վերածուիլ կոյր զգացականութեան:

Հետեւաբար՝ ճշմարիտ քրիստոնէական կեանքին մէջ արդարութիւնն ու սէրը իրարու հակառակ չեն, այլ իրարու լրացնող եւ ամբողջացնող արժէքներ են:

Մեր օրերուն մեծ վտանգներէն մէկն այն է, որ արդարութիւնը յաճախ կը չափուի ոյժով, ազդեցութեամբ կամ քաղաքական շահերով: Յաճախ մարդիկ կը կարծեն, թէ իրաւացի է ան, ով աւելի զօրաւոր է, աւելի ազդեցիկ է կամ աւելի բարձր կը խօսի: Սակայն պատմութիւնը բազմիցս ցոյց տուած է, որ ոյժը միշտ չէ, որ արդարութեան կողմն է, եւ մեծամասնութիւնը միշտ չէ, որ ճշմարտութեան կրողը կը հանդիսանայ: Իրական արդարութիւնը պայմանաւորուած չէ ո՛չ թիւով, ո՛չ դիրքով եւ ո՛չ ալ իշխանութեամբ: Անիկա հիմնուած է ճշմարտութեան վրայ եւ կը մնայ անփոփոխ նոյնիսկ այն ժամանակ, երբ ամբողջ աշխարհը փորձէ զայն անտեսել:

Արդարութիւնը նաեւ քաջութիւն կը պահանջէ: Դիւրին է արդարութեան մասին խօսիլը, երբ անիկա ոչինչ կ՚արժէ մեզի: Սակայն երբ արդարութիւնը կը պահանջէ զոհողութիւն, անձնական կորուստ կամ դժուարութիւններու դիմագրաւում, այն ատեն կը բացայայտուի, թէ ո՛վ է իսկապէս արդարութեան հետեւորդը: Պատմութեան ընթացքին բազմաթիւ սուրբեր, մտածողներ, հասարակական գործիչներ եւ հասարակ մարդիկ ճշմարտութեան եւ արդարութեան համար հալածուած են, բանտարկուած են եւ նոյնիսկ իրենց կեանքը զոհաբերած են: Անոնք հասկցած էին, որ արդարութիւնը արժէք մըն է, որուն համար արժէ պայքարիլ եւ զոհողութիւն կատարել:

Արդարութիւնը չի՛ սկսիր աշխարհի փոփոխութենէն, այլ մարդուն սիրտի փոփոխութենէն: Որքան ալ մենք քննադատենք հասարակութիւնը, իշխանութիւնները կամ մեր շրջապատը, իրական փոփոխութիւնը պիտի սկսի միայն այն ատեն, երբ իւրաքանչիւր անհատ սկսի աշխատիլ իր անձին վրայ: Արդար հասարակութիւն ստեղծելու համար նախ պէտք են արդար մարդիկ: Արդար պետութիւն կառուցելու համար նախ պէտք են արդար քաղաքացիներ: Արդար ընտանիքներ ունենալու համար նախ պէտք են արդար ծնողներ եւ զաւակներ: Մեծ փոփոխութիւնները միշտ սկսած են փոքր, բայց անկեղծ փոփոխութիւններէն:

Այս պատճառով ալ արդարութիւնը պէտք չէ դիտել որպէս վերացական գաղափար կամ տեսական ուսմունք: Անիկա ամէնօրեայ կեանքի մէջ գործադրուելիք իրականութիւն է: Երբ մենք ճշմարտութիւնը կը խօսինք, արդարութիւն կը գործենք: Երբ մեր խոստումը կը պահենք, արդարութիւն կը գործենք: Երբ չենք զրպարտեր, չենք խաբեր, չենք շահագործեր ուրիշները, արդարութիւն կը գործենք: Երբ օգնութեան ձեռք կը մեկնենք կարօտեալին, կը պաշտպանենք անիրաւուածը եւ կը յարգենք դիմացինի արժանապատուութիւնը, արդարութիւն կը գործենք: Արդարութիւնը մեծ խօսքերու մէջ չէ միայն, այլ նաեւ կեանքի փոքր եւ առօրեայ ընտրութիւններուն մէջ:

Հետեւաբար՝ երբ արդարութեան մասին կը խօսինք, նախ մենք մեզի հարցնենք՝ արդեօք մենք արդա՞ր ենք մեր դատողութիւններուն մէջ, արդա՞ր ենք մեր վերաբերմունքին մէջ, արդա՞ր ենք մեր որոշումներուն մէջ, արդա՞ր ենք մեր ընտանիքներուն մէջ, արդա՞ր ենք մեր գործատեղիներուն մէջ, արդա՞ր ենք մեր խիղճին առջեւ եւ ի վերջոյ արդա՞ր ենք Աստուծոյ առջեւ: Որովհետեւ արդարութեան մասին խօսիլը դիւրին է, արդարութիւն պահանջելը՝ աւելի դիւրին, բայց արդարութեամբ ապրիլը մարդկային կեանքի մեծագոյն մարտահրաւէրներէն եւ միաժամանակ մեծագոյն առաքինութիւններէն մէկն է:

Թող որ մեր խօսքերուն, դատողութիւններուն եւ գործերուն մէջ արդարութիւնը չի մնայ որպէս գեղեցիկ գաղափար կամ գրական արտայայտութիւն, այլ դառնայ իրականութիւն: Որովհետեւ միայն այն հասարակութիւնը, որ կը հիմնուի արդարութեան վրայ, կրնայ ունենալ խաղաղութիւն, վստահութիւն եւ կայուն ապագայ, և միայն այն մարդը, որ կ՚ապրի արդարութեամբ, կրնայ խաղաղութիւն գտնել իր խիղճին մէջ եւ արժանի կերպով կանգնիլ Աստուծոյ առջեւ:

Վարանդ Քորթմոսեան

Քթիշի հերոսամարտը. մի ձեռքով՝ զենք, մյուսով՝ դույլ

Տայոց պատմությունը հարուստ է ազգային-ազատագրական շարժումներով ու հաղթական ճակատամարտերով, սակայն դրանցից շատերը բովանդակությամբ զգացմունքային ելույթներ էին՝ ծնված ցավից ու տառապանքից ազատվելու և արդարության շուտափույթ վերականգնման անզուսպ ձգտումից: Որպես կանոն՝ այդպիսի շարժումները չեն հաշվարկել աշխարհաքաղաքական իրողությունները, ազգի տնտեսական ներուժը... Եվ հենց այդ պատճառով, չնայած ռազմի դաշտում տոնած հաղթանակներին, հաճախ չենք կարողացել ապահովել ցանկալի տրամաբանական արդյունքը՝ անկախության վերականգնումը: Բայց նաև, անկախ արդյունքից, այդ ճակատամարտերը պատմության մեջ մնում են որպես հայոց ռազմական մտքի հիանալի մարմնավորումներ: Իսկ անկախության կորստի վտանգի առջև պարբերաբար չկանգնելու համար անհրաժեշտ է հայոց ռազմական մտքի կիրառության նոր հնարավորություններ մշակել, հարստանալ նոր գաղափարներով՝ պահպանելով մեր ռազմարվեստի ինքնատիպությունը:

Այսօր մեր ուշադրության կենտրոնում արդյունք ապահոված հերոսամարտ է: 9-րդ դարի կեսերի հակաարաբական շարժումը նախորդներից շահեկանորեն տարբերվում էր իր կազմակերպվածությամբ: Բացի այդ՝ բարենպաստ իրավիճակ էր ստեղծվել արտաքին ճակատում. արաբական խալիֆայության ենթակա ժողովուրդներն ինքնավարության ձգտումներ էին ցուցադրում և հզորանում էին իրենց տարածքներում՝ դիմադրելով թուլացող կայսրությանը...

Արաբաց խալիֆ Մութավաքիլը 200-հազարանոց բանակով Հայաստան է ուղարկում թյուրք զորավար Բուղային, որը չարաչար պարտվում է Արցախում: Դիզակի իշխան Եսայի Աբու-Մուսեի գլխավորությամբ Քթիշ բերդին ապավինած հայոց փոքրաթիվ զորքին հաջողվում է կոտրել արաբական հեղեղը. եկել էր նվաճողների հետքը հայոց աշխարհից ջնջելու պատմական պահը:

Ամրոցի ավերակներն այսօր էլ մնում են Հադրութի շրջանի Տող գյուղի հյուսիսային մասում՝ անտառապատ Տող (Քթիշ) լեռան վրա: Այստեղ է նաև Գտիչի վանքը:


Պատմագիր Թովմա Արծրունին իր «Պատմություն Արծրունյաց տան» աշխատության մեջ նշել է. «Ապա հավաքեց (Ապումուսեն) երկրի ամբողջ բնակչությանը՝ կանանց, երեխաներին: Արցախի բնակավայրերից հավաքվում է ռամիկների, շինականների բազմությունը (ժողովրդին հրամայվում է քաշվել դեպի լեռները), սակավաթիվ զորականների զորախմբերը՝ լեռան վրա՝ Քթիշ անվանված ամրոցում, ըստ այնմ՝ նաև մթերապաշար»:

Հասնելով Քթիշ՝ Բուղան համոզվում է, որ հեշտ չէ գրավել այդ ամրոցը, ուստի բանակ է դնում բերդի արևելյան պարիսպների տակ: Այնուհետև զորականներին հրամայում է տներ շինել ու բաբաններ կանգնեցնել՝ բերդի պարիսպները փլուզելու համար: Բուղան նույնիսկ փորձում է ամրոց մտնել ստորերկրյա ուղիներով, որոնք փորել էր տվել հատուկ այդ նպատակով: Նրա ջանքերը, սակայն, ոչ մի արդյունք չեն տալիս:

Հակառակորդի հրամանատարության այս քայլերը ցույց են տալիս, որ ժամանակն աշխատում է բերդի պաշտպանների դեմ, եթե վերջիններս սպասեն պաշարողների գործողություններին և հայտնվեն խորը պաշտպանության մեջ:

Եսայի Աբու-Մուսեն հստակ գիտակցում էր, որ ամրոցի փրկությունը նախածեռնողական պաշտպանությունն է, ուստի որոշեց չթույլատրել հակառակորդին վերջնականապես վերամիավորվել բերդի պարիսպների տակ: Նա դուրս եկավ բերդից և արտագրոհներ կազմակերպեց: Թշնամին ձգտում էր իր բոլոր զորամասերում առնվազն 500 մարտիկ ունենալ, սակայն չկարողացավ լուծել այդ խնդիրը բերդի պաշտպանների խելամիտ գործողությունների շնորհիվ: Վերջիններս հարձակվում էին ու արաբներին ստիպում նահանջել: Հաղթանակը ցույց է տալիս, որ հայոց իշխանը ճիշտ մարտավարություն է ընտրել:

«Ելան մարտի և պատերազմեցին. ըստ որում՝ սաստկացավ կռիվը, հախուռն հարձակմամբ դիմեցին միմյանց վրա, — վկայում է Թովմա Արծրունին:— Արքունի զորքը ջարդվեց մեծամեծ հարվածներից, փախան իրենց բանակը և մտան այն տները, որ շինել էին: Ապումուսեի լեռնային զորքը հետամտեց փախստականներին, իջեցրեց լեռան վրայից և վերադարձավ սպանվածների իրերը վերցնելու: Ապա գնացին իրենց բանակատեղը մեծ հաղթության՝ ուրախանալով անտրտում խնդությամբ»:



Արաբները վճռական ճակատամարտը պլանավորել էին բանակի վերջնական վերամիավորումից հետո: Հասկանալով, որ բերդապահները կրկին կարող են արտագրոհներ կազմակերպել՝ Բուղան 1000 մարտիկներից կազմված պահեստազոր է առանձնացնում՝ հայերի հակագրոհների դեպքում օգնության հասնելու համար: Ահա՛ թե ինչպես է Թովմա Արծրունին ներկայացնում հակառակորդի նախապատրաստությունը և ուժը. «Այնժամ հրաման տվեցին ամբողջ զորքերին ելնել պատերազմի: Եվ ահա աղաղակ, փողեր, քնարներ, անհամար զորքը սպառազինվեց զենքով, սրերով և ամեն տեսակ պատրաստությամբ, ու քիչ մնաց հիմքից տապալվեր լեռը: Զորքը բարձրացավ մինչև լեռան գլուխը, նրա հետ նաև բազում դրոշներ՝ ձիերին նստած հազար ընտրյալ քաջ տղամարդկանց (ձեռքին): Եվ գրեթե ոչ մի տեղ, աշխարհի չորս կողմերում ոչ մի թագավորի մոտ չէր երևացել այդպիսի ահավոր տեսքով ու սպառազինությամբ զորք՝ սաստիկ որոտումով ու ճայթյունով, զենքերի փայլատակումով և ինչով այն ժամանակ զինվել, զարդարվել ու հանդերձավորվել էր արաբացոց զորքը: Եվ գունդ առ գունդ, փութապես ելան մեկը մյուսի հետևից, և ամեն ոք, որ տեսնում էր, մեծ երկյուղով ներս էր մտնում (տուն)»:

Եսայի Աբու-Մուսեն միանգամայն տրամաբանական ու հակառակորդի համար անսպասելի որոշում է կայացնում: Պարզ էր, որ այդ գրոհի նշանակությունը շատ մեծ է: Այդ իսկ պատճառով նա վճռում է արտագրոհներ չկազմակերպել, այլ միայն դիմադրել: Հակառակորդի օգնական հազարյակը փաստացի դուրս է մնում մարտական գործողություններից, իսկ արաբների սկսած հարձակումը, աստիճանաբար թուլանալով, սկսում է մարել: Ահա հենց այդ ժամանակ նա վճռում է հակագրոհի անցնել՝ գրոհողներին դասավորելով սեպածև:

«Դարձան իբրև երկաթե մի մեծ բլուր կամ ադամանդյա վեմ և իրար շուրջ խռնվելով՝ կպան միմյանց, ինչպես մեկ մարդ... մնացին անշարժ, առաջ չընկան մեկմեկուց: Եվ մինչ (արաբները) կարծում էին, թե մատնվեցին իրենց ձեռքը, սակայն նրանք աղոթում էին և Աստծուն կանչում իրենց օգնության: Ապա դիմեցին (արաբների) վրա չորս մասով՝ Քրիստոսի խաչի նմանությամբ: Հարվածեցին ճակատից, ճեղքեցին մարտաշարքերը և նրանց դարձրին դեպի զառիվայր, իջեցրին լեռան վրայից: (Թշնամին) կրեց մեծամեծ հարվածներ, ինչպես քամուց հարդն է քշվում, կամ ծուխը՝ մրրիկից, և այդպես կորան գնացին...»,— գրում է Թովմա Արծրունին:

Քթիշի իշխանն այնպես է կողմնորոշվում տեղանքի ընտրության հարցում, որ հակառակորդին կրկին չի հաջողվում գործի դնել պահեստազորը: Որպես հետևանք՝ թշնամին կրկին նահանջում է:

Կատաղած Բուղան դիմում է պարզ սադրանքի և Եսայի Աբու-Մուսեին առաջարկում կամավոր իջնել բերդից, այլապես կմորթի իր բանակում պահվող հազարավոր հայ գերիներին և նրանց արյամբ կպտտեցնի Իշխանաձորի ջրաղացը: Աբու-Մուսեն չի արձագանքում, և Բուղան հրամայում է սրի քաշել բոլոր հայերին: Սակայն հենց սկսվում է կոտորածը, հայ զինվորներն անսպասելի հարձակվում են արաբների վրա, հողմացրիվ անում Բուղայի մարդասպաններին և նույնքան արագ էլ անհետանում: Իշխանաձորի ջրաղացն այնուհետև անվանվել է Արյունոտ ջրաղաց՝ որպես այդ եղեռնագործության անխոս վկա:

Թովմա Արծրունին վկայում է, որ Եսայի Աբու-Մուսեի ու Բուղայի միջև բերդի պաշարման մեկ տարվա ընթացքում քսանութ բախում է տեղի ունեցել, և հայ իշխանը ոչ մի անգամ չի պարտվել անսպասելի վճիռների ու դրանք արագորեն կյանքի կոչելու ունակության շնորհիվ: Ամենաուշագրավն այն է, որ բերդի պաշտպանները մինչև ֆիզիկական վերջնական հաղթանակը թշնամուն նախ հոգեբանորեն են պարտության մատնում. նման դժոխային պայմաններում նրանք Բուղայի կործանած Գտչավանքի փոխարեն նոր եկեղեցի են կառուցում: Եվ քանի որ սրբավայրը կառուցվում է ճակատամարտի թեժ պահին, այլ կերպ ասած՝ հայը մի ձեռքով զենքն էր բռնել, մյուս ձեռքով՝ դույլը, եկեղեցին անվանվում է Թեժ: Սա հսկայական հաղթանակ էր պաշտպանվողների համար, որը հուսահատության հասցրեց Բուղային: Նոր եկեղեցու կառուցումը, այսպիսով, թշնամու դեմ ուղղված հոգեբանական ահեղ զենք էր, որը կրակեց ճիշտ տեղում ու ճիշտ պահին:

Քթիշի հերոսամարտի էջերից մեկը Թաղալ աղբյուրի ավանդությունն է: Բուղան որոշել էր բացահայտել բերդին ջուր մատակարարող աղբյուրի տեղը և ծարավի մատնել բերդապաշտպաններին: Բայց նրա ջանքերն ապարդյուն էին: Ի վերջո Բուղան գտնում է մի պառավի, որը, կաշառք վերցնելով, խորհուրդ է տալիս յոթ օր ծարավ պահել մի ջորու և բաց թողնել բերդի շուրջը: Այդպես էլ անում են: Ծարավ ջորին հասնում է աղբյուրի ակունքին ու սկսում սմբակներով քանդել գետինը: Թշնամին գտնում է ջրի ակունքը և ավերում այն:

Շատ շուտով Բուղան համոզվում է, որ Քթիշը խմելու ջրի այլ աղբյուր ունի: Նա չէր էլ կարող պատկերացնել, որ բերդը ջուր է ստանում 12 կմ հեռվից՝ Բերդասարի ստորոտի աղբյուրից: Ժամանակին կայացված ճիշտ որոշումը ոչ միայն հայերին փրկեց ծարավի մատնվելուց, այլև Քթիշի հերոսամարտի բաղկացուցիչ մասերից մեկն է, թշնամու նկատմամբ հայերի հոգեբանական առավելության հերթական դրսևորումը:

Բուղան ստիպված էր նամակ գրել Բաղդադի Մութավաքիլ խալիֆին, որ Քթիշի տերը՝ Եսայի Աբու-Մուսեն, անպարտելի է: Արցախցի իշխանն էլ հայտարարում է, որ իր կռիվը խալիֆի դեմ չէ, այլ իր իրավունքները չճանաչող մի բռնակալի: Բաղդադի խալիֆի գրությամբ Աբու-Մուսեն անմեղ է ճանաչվում, դադարեցնում է պայքարը և գնում Բուղայի մոտ, ապա ուղարկվում Բաղդադ՝ որպես գերի: Բայց նրա ընդվզումն անարդյունք չի մնում և հանգեցնում է Հայաստանի անկախության վերականգնմանը: Մովսես Կաղանկատվացու բնորոշմամբ՝ Աբու-Մուսեն խաղաղության մարդ էր, սակայն Քթիշի հերոսամարտում ոչ միայն լեռնցու անօրինակ խիզախություն է ցուցադրել, այլև իր զորավարական տաղանդը՝ խարսխված ինչպես ռազմական գործի իմացության, այնպես էլ հեռատեսության, հոգեբանական միջոցների հանճարեղ ընտրության և որոշումների անսպասելիության վրա:

Իշխան Քիշմիրյան

Եթե Այնշտայնը «Նարեկ» կարդար

1929 թվականին, Նյու Յորքի ռաբբի Հերբերտ Գոլդշտեյնի հեռագրային հարցմանն ի պատասխան, Ալբերտ Այնշտայնը ձևակերպեց XX դարի աշխարհայացքային ամենաշահեկան հայտարարություններից մեկը: Նա նշեց, որ հավատում է Սպինոզայի Աստծուն, որը դրսևորվում է գոյության օրինաչափ ներդաշնակության մեջ, այլ ոչ թե այն Աստծուն, որը զբաղված է մարդկանց ճակատագրերով ու արարքներով: Այս միտքը դուրս էր դոգմատիկ աստվածաբանության ծիրից. Այնշտայնը, թերևս, Սպինոզայի պանթեիզմի մեջ էր տեսնում տիեզերական կարգի և անբացատրելիի գոյաբանական բանալին:

Ակամա հարց է ծագում. եթե Այնշտայնը ծանոթ լիներ X դարի հայ աստվածաբան և մտածող սուրբ Գրիգոր Նարեկացու ժառանգությանը, արդյո՞ք չէր ասի. «Ես հավատում եմ Նարեկացու Աստծուն»: Չէ՞ որ Նարեկացու տեսիլքում ևս Աստված համատարած ներկայություն է, բայց միևնույն ժամանակ անմիջականորեն մասնակից է յուրաքանչյուր մարդու կյանքին:

Աստծու էությունը քննելիս Նարեկացին գործածում է գոյաբանական հիմնարար հասկացություններ, որոնք լատինական ավանդույթում համապատասխանում են substantia (գոյացություն) եզրույթին՝ նույն այն հասկացությանը, որով Աստծուն բնութագրում էր Սպինոզան: Այս առումով հատկանշական է «Մատյանի» Բան ԽԱ-ի հետևյալ հատվածը.


Չի դու ես միայն երկնքում անճառ,
երկրում անզնին,
Գոյության բոլոր տարերքների մեջ,
Աշխարհի բոլոր եզրածագերում,
Սկիզբն համայնի և ամեն ինչում՝
ամբողջ լրությամբ,
Օրհնյա՛լ ի բարձունս:

Իսկ միգուցե Սպինոզան ինքը ծանո՞թ էր Նարեկացու մտքին: Չէ՞ որ նրա ծննդավայր Ամստերդամում գործում էր Ոսկան Երևանցու հայկական տպարանը, իսկ որոշ ավանդությունների համաձայն՝ նրանք նույնիսկ մտերիմ են եղել: Հաստատապես պնդելն անհնար է, սակայն Աստծու համատարած ներկայության հարցում նրանց պատկերացումներն ակնհայտորեն աղերսվում են: Նարեկացու աստվածաբանության մեջ Աստված միաժամանակ ներակա է (իմմանենտ) և էապես անդրանցական (տրանսցենդենտ): Բան Լ�դ-ում Աստված բնութագրվում է որպես «անմատչելի հեռավոր» և «անընդմիջելի մերձավոր»: Սուրբն ասում է. «Չես երևում երբեք, բայց առանց լույսիդ չի տեսնվում ոչինչ...»:

Հարկ է, սակայն, նկատել նաև էական տարբերությունը. եթե Սպինոզայի փիլիսոփայությունը պանթեիզմ է (համաստվածություն, որտեղ Աստված և աշխարհը նույնական են), ապա Նարեկացու աստվածընկալումն ավելի շուտ պանենթեիզմ է (ամենաստվածություն). ամեն ինչ Աստծու մեջ է, բայց Աստված վեր է ամեն ինչից և չի սահմանափակվում աշխարհով: Սպինոզայի պանթեիստական Աստվածը զուրկ է անձնավորված, հաղորդակցական բնույթից և անհաղորդ է մարդկային ճակատագրին: Մինչդեռ Նարեկացու տիեզերքում Աստված անձնավորված «Դու» է, իսկ «Մատյան ողբերգության» աղոթագրքի ամբողջ հյուսվածքը կառուցված է որպես կենդանի, գոյաբանական երկխոսություն («Ի խորոց սրտից խօսք ընդ Աստծոյ»): Նարեկացու մտքի թռիչքի շնորհիվ տիեզերական, անսահման Աստված միաժամանակ անհատի աղոթքն ունկնդրող Անձ է:

Այս ընկալմամբ Նարեկացին հարում է քրիստոնեական նեոպլատոնականության և ապոֆատիկ (բացասական) աստվածաբանության ավանդույթին: Նույն ակունքներից են սնվում IX դարի մտածող Հովհաննես Սկոտ Էրիուգենան և XV դարի փիլիսոփա Նիկողայոս Կուզացին: Հակադրությունների համընկնման (coincidentia oppositorum) իր հայեցակարգում Կուզացին Աստծու էությունը պատկերում էր որպես անսահման մի գունդ, որի կենտրոնն ամենուր է, իսկ շրջագիծը՝ ոչ մի տեղ: Սակայն եթե եվրոպացի միջնադարյան և վերածննդյան մտածողները հիմնականում ընթանում էին բանական-փիլիսոփայական ճանապարհով, ապա Նարեկացին այդ ճշմարտություններին հասնում է խորհրդապաշտական աղոթքի փորձառությամբ: Դա վեհ ու գեղեցիկ մի փիլիսոփայություն է, որը հանճարի շուրթերից հնչում է որպես աղերսանք և պաղատանք:

Հետագա տարիների իր գրառումներում Այնշտայնը խոսում է «տիեզերական կրոնական զգացողության»՝ որպես կրոնականության բարձրագույն դրսևորման մասին: Նարեկացու «Մատյանում» այդ տիեզերական զգացողությունը



չոր վերացարկում չէ. այն ներդաշնակորեն ձուլվում է անձնական, ապրված աղոթքին: Տիեզերաընդգրկուն Աստված ամենուր է, ուստի նախևառաջ՝ մարդկային տառապանքի ու հույսի այն խորքերում, որտեղից բխում է անհատի աղաղակը՝ «ի խորոց սրտից»: Եվ գուցե հենց այդտեղ էլ հանդիպում են գիտնականի փնտրած տիեզերական ներդաշնակությունն ու աղոթող մարդու կենդանի Աստված:

Գասի Գասպարյան
կրոնի ուսուցիչ, աստվածաբան

Երանելի տեր Ատոմ Անձևացյաց եպիսկոպոսի ներբողը՝ նվիրված Հովհաննես Կարապետին [Մկրտչին]

↩ *էջ 3*

Եկե՛ք, քրիստոսասե՛ր մարդիկ, արթնացնենք մեր մտքերը սրա հայտնությամբ, որքան մեր կարողությունն է հանդիսակից լինել սրա ճշմարտությանը: Քանզի եթե կենցաղասեր [հեթանոս] իմաստասերները ժամանակի հոլովույթի մեջ, վերաթռիչ ունայնաբանությամբ գովելով, ըմբշմարտիկների մրցությունն էին քերթվածաբար վիպերգում, ապա որչա՜փ այս մեծությանն ու հռչակման [արժանիին անկ է] հարատևորեն լեզվի վրա ունենալ, այլև ամենայն զգաստությամբ ամեն օր խոսել նույն բանը: Եվ ո՞վ է արդյոք արժանի համեմատվելու սրա գործունեությանը, որ, նմանվելով իր Տիրոջը, սկսեց գործել և ուսուցանել: Եվ եթե բոլոր կողմերից նայես սրա ճգնությանը, նրան հիշելու [համար] խիստ նվազ կլինի մտքի հանճարը: Երկար ուղիով երկինք է ճեմում և արշավում թևածելով, որով կորզվում է աշխարհի հնոցաման և հրաշեկ քուրայից՝ մաքուր և պարզ պահելով իր ոսկին՝ անեղծորեն դրոշմվելով կայսերական դահեկանին՝ տարամերժելով ազգակիցներին և անվանելով «իժերի ծնունդներ», ասում է. «Ո՞վ ձեզ սովորեցրեց փախչել վերահաս բարկությունից» (Մատթ. Գ 7, Ղուկ. Գ 7) աստվածասաստ պատուհասի: Հանրահայտ է, որ դու, ո՛վ Վարդապետ և Տեր, հավաստելով ճշմարտեցիր ահավոր իմաստով՝ ցողունակեր և պտղազատույց հոսիչով: Այրող հուրն ուշացնելով [հասցնել] հին Հակոբի և նոր Իսրայելի ծույլերի և ապերասաններ ապաշխարության համար հոգեպատում սրբի սրված խոսքն է դնում կենաց ծառարմատին: Եվ ի՞նչ է արդարության հատուցումը. Նա սկզբնավորողը եղավ գահի աջակողմյան լուսազեղ խմբի, որ գլխավորում էր հենց ինքը, և ըմբշամարտի պահին, օծված կատարյալ հրահանգներով, սրբության յուղով, հարատև պահքի գոտեպինդ զորությամբ [դարձավ] նահատակաց պետը: Այլև, ըստ Պողոսի, ծովի և ցամաքի չափ [ճաշակեց] ազգակիցների և սուտ եղբայրների (հմմտ. Բ Կորնթ. ԺԱ 13, 26), աղոթքի և տքնության, քաղցի և ծարավի և այլևայլ չարչարանքների, և ատելիի [սատանայի] դեմ մղած ամենօրյա պայքարի [տված] նեղությունը: Այս և առավել քան այս կրեց՝ ի լրումն Քրիստոսի նեղությունների: Բայց անձով սա համեմատելի է հրեշտակական Եղիային այն, [որ] զարմանալի զորությամբ սաստում էր կիրքը, և հրեղեն կառքով հափշտակվում՝ ոչ միանում սրան չզիջելով, այլ գերազանցելով, որովհետև նա ըստ օրինակի էր, իսկ սա՝ ըստ օրինակի և ճշմարտության: («Օրինակը» Հին Կտակարանն է, իսկ «ճշմարտությունը»՝ Նորը, որոնցից յուրաքանչյուրն ունի արժեքային իր համակարգը: Սրանով ցույց է տրվում, թե Հովհաննես Մկրտիչը պատկանում է թե՛ Հնին՝ որպես մարգարե, և թե՛ Նորին՝ որպես առաքյալ.— Հ. Ք.): Չկա մեկը, որ բոլոր կողմերով ամբողջապես հասնի բացարձակ առաքինության: Նկատի չունենք բարու և չարի միջև առկա հակառակությունը. մեկն այսպիսին է, մյուսը՝ մեկ այլ կերպ, որ, մասերի բաժանելով, ջամբեց, ոմանց՝ մի մասը, մյուսներին՝ մասերի մասերը: Իսկ այս սրբին ու մեծին ինչպե՞ս որակենք. սրա բովանդակ կյանքն իր բոլոր մանրամասներով մաքրություն էր: Էակներից ո՞վ կարող է այսքան բեռ կրել: Միայն նա գիտե երկնքում բնակվող մեծ Քահանայապետին (Քրիստոսին.— Հ. Ք.): Նրանից հետո այս մեծ բարեկամը նրա օրինակը եղավ՝ ցածր, քան ցածրերը, և բարձր, քան բարձրերը, որ եկավ Քրիստոսի նման բնակվելու գազանների և պաշտվելու հրեշտակների մեջ [տե՛ս Մարկ. Ա 13]՝ լինելով կենդանի ողջակեզ: Հաղորդ լինելով սրա ոգեղեն փորձին՝ քահանայական կարգը մարդկանց տրվում էր ոչ անարգաբար: [Սա] եղավ դետ և դիտանոց՝ իբրև խրատ զգուշության և օրինակ ոչ միայն Իսրայելի, այլև բովանդակ տիեզերքի համար: Կատաղած և մոլուցքով բռնված թագավորը, պատժական խոսքով սթափվելով, նրանից ընդունում է ավետարանող քաղցրագույն խոսքեր: Սրա մասին է մարգարեի միտքը. «Տե՛ր,— ասում է,— ինձ դատաստանի համար կարգեցիր և ինձ ստեղծեցիր նրա պարը հանդիմանելու համար» (Ամբակ. Ա 12): Իսկ երբ չարությունն ու անօրենության հուրը որջանալով նյութվեց լկտի ձեռքում, և հեշտական ցանկասիրությունը թելադրեց մոլեկան բարկություն, ի՞նչ արեց. ձերբակալեց և բանտ նետեց [Մկրտչին] իր եղբայր Փիլիպոսի կնոջ պատճառով, քանզի դիվապաշտ զեխությամբ հափշտակված՝ չհանդուրժեց սրբից սաստկագույնս հանդիմանվել՝ կարծելով, որ կարող է տկարացնել անշիջանելի լույսը, որ ոչ միայն չտկարացավ, այլև ավելի բարձր ձայն արձակեց, քան առաջ: Եվ ահավասիկ լինելիք բաները. սրբի ձեռքով սանձահարվում է կնոջ կերպարանքով զուգված բանսարկուի բռնությունը: Ինչպես եվայական օձ՝ ցնցվելով կաքավում էր, կայթում՝ հագուրդ տալով անօրեն Հերովդեսի տենչանքներին, և գինարբուքի անօրեն մասնակիցների տռփանքին: Եվ ի՞նչ էր ուզում կինն այն պիղծ և գարշելի՝ դաժան մորից խրատվելով. ասում է. «Տո՛ւր ինձ Հովհաննեսի գլուխը» (Մատթ. ԺԴ 8–11, Մարկ. Զ 24–29): Եվ արդ, լսելով և ընկալելով այս խոսքերը, ինձ է մոտենում այն աստվածասեր հոգին: Ես, երկյուղով և ահով հանդերձ, արտասուքս զուգելով ներդաշնորեն, սակայն զարմացած, տգիտորեն անտեղյակ եմ այս խորհրդին: Ընթանում է Աստծու և աստվածայինների մոտ և տեսնում [նրանց], քանզի այնպես է հոգևոր նախախնամությունը, որով Տեր Հիսուս հիանում էր իր սուրբով: Այլև էր նա աստված աստվածների մեջ (հմմտ. Սաղմ. ՁԱ 6), որի մասին Աստծու խոսքն ասում է, որ սա ինքը գլուխն էր արդարության, գլխավորում էր մնացյալ բաղձալիներին (սուրբերին), նախադասված քրիստոսական գլուխ էր՝ Սուրբ Երրորդության բույրի [ազդումով դարձած] բազմաբույր: Որքա՜ն մեծ է այս ուրախությունը կատարյալ արդարների հոգիներում, որքա՜ն է ուրախանում սրբոց դասն այս դասապետով, ի՜նչ գերազանց է բարեփառությունը, ի՜նչ գերազանց է թիկնոցը քահանայական, որով պարածածկվում են քահանայական Պետությունները («Պետությունը», համաձայն Ս. Դիոնիսիոս Արիսպագացու սահմանակարգման, նվիրապետական աստիճաններից մեկն է.— Հ. Ք.): Սա մեզ [համար] նախասկիզբ է, որ անսասանելի հետևողականությամբ ընթանում է արքայության շավղով, սա ինքն է հրահանգանոց և կրթարան, սա մեզ համար զինավառ մարտական վահան է, արյուն՝ անբիծ, արյուն՝ անարատ, արյուն՝ աբելյան (նկատի ունի առաջին նահատակին՝ Աբելին.— Հ. Ք.), որ առավել խոսուն է, քան այն (ակնարկում է Աստծու խոսքը. «....Քո եղբոր արյան կանչը երկրից բողոքում է ինձ» (Ծննդ. Դ 10).— Հ. Ք.): Արյուն, որի բաղադրությունը, փոխանցվելով մարդկանց մեջ, [նրանց դարձնում է] լուսեղեն սրբությամբ անմեղ գառներ, սրբությամբ բողբոջյալ արյուն՝ խառնված Քրիստոսի անապական արյանը, որ վախճան չունեցավ, այլ սկիզբը եղավ՝ ըստ [Սուրբ] Գրոց, թե՝ արդարը, հասնելով իր վախճանին, կհանգստանա և եթե կատարյալ է սակավ ժամանակի մեջ, ապա հետո Տիրոջ ցանկալի անձը կլինի՝ հարատևորեն լինելով Աստծու ձեռքում: Սա աշխարհի առջև փակ դրախտի դռները խորտակեց խավարային վայրերում հեծող և ավետիս հռչակող հանճարաշունչ դասերի համար՝ ունենալով առաքելական շնորհ նաև մահվան վրա. «Ձայն բարբառոյ» երկնաբնակների մեջ: Եվ ահա արդ, աղաղակում է առավել, քան միասնաբար արձակված ձայնը, քան շեփորի ու երգեհոնի մեջ հմտացածների և արվեստով հորինողների [նվագը]: Ձայնն այս բաղդատելի է Սինայի [ձայնին] (տե՛ս Գիրք Ելից ԺԹ 16), ինչպես մեկը, հանդիպելով գազանի, կքարկոծի և կխոսի նրա հետ ճշմարտության պարսաքարով: Սա հավասար է գաբրիելյան փողին, և նույնիսկ նրանից առավել: Սրան երանի են տալիս հրեշտակաց գնդերը, երկնավոր զորությունները և հրեշտակաց խմբերը, բոլոր հրե էությունները, առաքելոց դասը, որ կանխապես վայելեց առաքյալների պատիվը, մարգարեների հույլը, որ կատարյալների հետ եղավ կատարյալ, նահատակների խումբը՝ իբրև գլուխ ողջախոհության, քահանաների՝ իբրև ամենակալ Տիրոջ մուճետիկներ և հրեշտակներ:

Արդ, որ երկնքում ես, քահանադ և պետդ մեծ՝ մտնելով առագաստված լույսի մեջ, ո՛վ տերդ, կարապե՛տդ մեր, կարապե՛տդ Հիսուսի և բովանդակ Սուրբ Երրորդության, խնդրում են քեզ ուխտավոր Եկեղեցու զավակները, որպեսզի անշեղ պահես՝ հովվելով մարգարեական պայծառատեսությամբ՝ անխաթար ապրեցնել Նոր Սիոնի այս փարախում (Եկեղեցում)՝ «սնելով դալարախիտ վայրերում և հանգստավետ ջրի եզերքին» (Սաղմ. ԻԲ 2)՝ գանձելով մեր հոգիները հավիտենականներիդ մեջ, որ այժմ գաղտնորեն ներկա են իբրև հայելի և օրինակ, այնժամ կհայտնվեն քո կամքի առաջնորդությամբ (հմմտ. Ա Կորնթ. ԺԳ 12): Եվ [երբ գա] օրն ահեղ և ահավոր, լիալրվի խոսքդ ճշմարտության, և անմահդ նստի իր Փառքի Աթոռին, բերանքսիվայր պաղատում եմ, որ ամենայն ժամ օգնես մեզ քո բարեխոսությամբ, որ Քրիստոսով անուշահոտ պատարագ է առ Հայր Աստված և Հոգին Սուրբ, որպեսզի [մենք]՝ ժողովուրդը քո, վայելելով աջակցությունդ, լինենք Սուրբ Երրորդությանդ փառաբանիչները: Թեև [փառաբանությունն այս] թերի է քո արժանիքի համեմատ, սակայն փութեռանդ մղումը մեր՝ ոչ պակաս: Արդ, քո սուրբ բերանով Սուրբ Երրորդությանդ փա՜ռք և պատի՛վ հավիտյանս հավիտենից. ամեն:

Ուխտի տապանակի գերեվարումն ու Տիրոջ զորությունը

Սկիզբը՝ թիվ 20

Ա Թագավորաց գրքի 4–6-րդ գլուխներում պատմվում է փղշտացիների դեմ պատերազմի ընթացքում Ուխտի տապանակի գերեվարման և վերադարձի մասին: Աստվածաշնչագիտական ուսումնասիրություններում նշվում է, որ այս պատումում տապանակը որոշ առումներով կատարում է Հին Մերձավոր Արևելքի կրոնական պատկերացումներում աստվածության արձանին վերագրվող խորհրդանշական գործառույթը՝ արտահայտելով աստվածային ներկայությունը: Սակայն տապանակն Աստված Ինքը չէր, այլ Նրա ներկայության սրբազան նշանը:

Պատերազմի ընթացքում իսրայելացի երեցները հրամայեցին տապանակը բերել բանակատեղի՝ հույս ունենալով, որ դրա ներկայությունը կապահովի հաղթանակը: Փղշտացիները նույնպես գիտակցում էին դրա կրոնական նշանակությունը և բացականչեցին. «Վա՛յ մեզ: Մեզ ո՞վ կփրկի այդ հզոր աստվածների ձեռքից» (Ա Թագ. 4:8): Այստեղ «ձեռք» բառը փոխաբերական իմաստով արտահայտում է զորություն և իշխանություն: Տապանակի՝ որպես Տիրոջ զորության նշանի ընկալումը հանդիպում է նաև աստվածաշնչյան այլ հատվածներում (Հես. 4:24):

Սակայն իսրայելացիների ակնկալիքները չարդարացան. նրանց բանակը պարտվեց, իսկ տապանակը գերեվարվեց (Ա Թագ. 4:10–11, 17): Այս իրադարձությունը հակադրվում է աստվածաշնչյան այն պատկերացումներին, որոնց համաձայն՝ Տիրոջ ներկայության հայտնությունը թշնամիների փախուստի պատճառ է դառնում (Թվ. 10:35, Սաղմ. 68:1–2): Իսրայելացիները, ըստ էության, տապանակի ներկայությունը դիտարկել էին որպես հաղթանակի երաշխիք՝ կարծես Աստծու զորությունը հնարավոր լիներ սահմանափակել սրբազան առարկայով:

Այս դրվագը համեմատելի է ուգարիթյան առասպելում Բաալ-Հադադի աստվածային զորության նկարագրության հետ, որտեղ նրա հզոր ձայնից թշնամիները փախչում են: Երկու պատումներում էլ առկա է աստվածային զորության և թշնամիների նահանջի մոտիվը, սակայն Ա Թագավորաց գրքում սկզբում տեղի է ունենում հակառակը. փախչում են իսրայելացիները, իսկ տապանակն անցնում է փղշտացիների ձեռքը:

Տապանակը տեղափոխվում է Ազոտոս և տեղադրվում Դագոնի տաճարում՝ նրա արձանի մոտ: Հաջորդ առավոտյան Դագոնը երեսնիվայր ընկած էր գետնին՝ Տիրոջ տապանակի առաջ, իսկ մյուս օրը գլուխն ու երկու ձեռքերն էին կտրված և ընկած շեմի վրա (Ա Թագ. 5:3–4): Այս տեսարանը խորհրդանշում է Դագոնի անզորությունը և Տիրոջ գերիշխանությունը: Հատկանշական է «ձեռք» բառի կրկնվող կիրառությունը. Դագոնի ձեռքերը կտրված են, մինչդեռ պատումում բազմիցս նշվում է, որ Տիրոջ ձեռքը ծանրացել է փղշտացիների վրա:

Ազոտոսի, ապա Գեթի և Ակկարոնի բնակիչները ենթարկվում են պատուհասների և պահանջում, որ տապանակը հեռացվի իրենց քաղաքներից (Ա Թագ. 5:6–12): Նրանք գիտակցում են, որ տապանակի ներկայությունն իրենց համար դարձել է վտանգի աղբյուր: Այսպիսով՝ պատումը ցույց է տալիս, որ Տիրոջ զորությունը չի սահմանափակվում Իսրայելի տարածքով, և Նրա ներկայությունը չի կարող ծառայեցվել մարդկային նպատակներին: Տապանակի գերեվարումը չի նշանակում Աստծու պարտություն. ընդհակառակը, փղշտացիների քաղաքներում տեղի ունեցած իրադարձությունները բացահայտում են Տիրոջ գերիշխանությունը նույնիսկ թշնամու երկրում: Ի վերջո, փղշտացիները հարկադրված են լինում վերադարձնել տապանակը Իսրայել (Ա Թագ. 6):



Տապանակի տեղափոխումը Երուսաղեմ

Դավթի՝ Երուսաղեմ տեղափոխած Ուխտի տապանակը նկարագրվում է որպես այն տապանակը, որի վրա հանգչում է «Զորությունների Տիրոջ անունը՝ քերովբեների միջև» (Բ Թագ. 6:2): Այս բնորոշումը կապված է Տիրոջ՝ որպես աստվածային և հաղթական Ռազմիկի պատկերացման հետ: Տապանակի հանդիսավոր տեղափոխումը հաջորդում է Բահաղ-Փերասիմում փղշտացիների նկատմամբ տարած հաղթանակին (Բ Թագ. 5:20):

Փղշտացիների դեմ մարտից առաջ Դավիթը Տիրոջից պատգամ էր ստացել, թեև բնագրում չի նշվում, որ այն ստացվել է տապանակի առջև (հմմտ. Դատ. 20:8, 27): Հաղթանակից հետո Դավիթը կատարվածը նկարագրում է հետևյալ խոսքերով. «Տերը իմ թշնամիներին կոտորեց իմ առաջ, ինչպես ջրերն են ճեղքվում» (Բ Թագ. 5:20): Այս պատկերավոր արտահայտությունը կարող է զուգահեռվել Հին Մերձավոր Արևելքի դիցաբանական ավանդույթներում տարածված՝ աստվածային Ռազմիկի կողմից քաոսային ջրերի հաղթահարման մոտիվին:

Հաջորդ հաղթանակից հետո Դավիթը տապանակը Բահաղե-Հուդայից՝ Կարիաթարիմից, տեղափոխեց Երուսաղեմ: Այն ուղեկցվում էր հանդիսավոր երթով, երաժշտությամբ և ծիսական պարերով (Բ Թագ. 6:5, 12–15): Այս իրադարձությունը կարելի է մեկնաբանել որպես Տիրոջ՝ աստվածային Ռազմիկի հաղթական մուտք Սիոն:

Տապանակի տեղափոխությունը կարևոր նշանակություն ունեցավ Երուսաղեմի՝ որպես կրոնական կենտրոնի ձևավորման և Դավթի իշխանության աստվածաբանական հիմնավորման համար: Այս ավանդույթները հետագայում արտահայտվեցին Սիոնի ընտրյալության, Դավթի թագավորական տան նկատմամբ Տիրոջ ուխտի և քաղաքի պաշտպանության մասին պատկերացումներում: Դրանց կարևոր արտահայտություններից է Սաղմոս 132-ը, որը կապում է տապանակի հանգրվանը Սիոնի ընտրության և Դավթի տան նկատմամբ Տիրոջ խոստման հետ: Սակայն հիմքեր չկան պնդելու, թե սաղմոսի ձևակերպումները հաստատապես օգտագործվել են հենց տապանակի տեղափոխության ժամանակ:

Տապանակը Բ Օրինաց գրքում

Բ Օրինացում Ուխտի տապանակի նշանակությունը ներկայացվում է ավելի զուսպ, քան աստվածաշնչյան որոշ վաղ ավանդույթներում: Այստեղ տապանակը չի նկարագրվում որպես Տիրոջ գահ կամ պատերազմի ժամանակ Նրա զորության դրսևորման խորհրդանիշ: Այն հիմնականում հանդես է գալիս որպես Ուխտի տախտակների պահոց:

Երբ Աստված պատվիրում է պատրաստել տախտակների երկրորդ հավաքածուն, միաժամանակ հրահանգում է պատրաստել նաև փայտե տապանակը (Բ Օր. 10:1–3): Տախտակները տեղադրվում են դրա մեջ (Բ Օր. 10:5): Հատկանշական է, որ եբրայերեն արոն (եբր.՝ אָרוֹן) բառը նշանակում է «արկղ» կամ «տապանակ», և Բ Օրինացում դրա գործառույթը հիմնականում սահմանափակվում է պահոցի նշանակությամբ: Ի տարբերություն Ելից գրքի նկարագրության՝ այստեղ չեն հիշատակվում ո՛չ քերովբեները, ո՛չ տապանակի ոսկեզօծումը, ո՛չ էլ դրա՝ որպես գահի խորհրդանշական ընկալումը:

Նույն փաստաթղթային նշանակությունն ունի նաև Օրենքի գիրքը. Մովսեսը ղևտացիներին պատվիրում է այն դնել Ուխտի տապանակի կողքին՝ որպես վկայություն Իսրայելի դեմ (Բ Օր. 31:24–26): Այսպիսով՝ տապանակի հիմնական գործառույթը կապված է Ուխտի վկայությունների պահպանման հետ:

Հետևաբար, Բ Օրինացում տապանակի նկարագրությունը կարելի է բնութագրել որպես գործառութային և զուսպ. շեշտը դրված է ոչ թե առարկայի խորհրդավոր զորության կամ ծիսական առանձնահատկությունների, այլ դրա մեջ պահպանվող Ուխտի տախտակների և դրանցով արտահայտվող աստվածային պատվիրանների վրա: Սա, սակայն, ինքնին չի նշանակում, թե գիրքը ժխտում է տապանակի սրբազան նշանակությունը. այն պարզապես կենտրոնանում է դրա՝ որպես Ուխտի վկայության պահոցի դերի վրա:

Տապանակը Քահանայական ավանդության մեջ (P)

Ուխտի տապանակի առավել մանրամասն նկարագրությունը պահպանվել է Քահանայական ավանդության մեջ (P): Ելք 25:10–22-ում ներկայացվում է դրա՝ Մովսեսին աստվածային հայտնությամբ տրված նախագիծը, իսկ Ելք 37:1–9-ում՝ Բեսելիելի կողմից պատրաստումը: Տապանակը պետք է պատրաստվեր ակացիայի փայտից, ամբողջությամբ պատվեր ոսկով՝ ներսից և դրսից, ունենար չորս ոսկե օղակ և ոսկեպատ փոխադրաձողեր: Դրա մեջ պետք է տեղադրվեին «վկայության տախտակները» (եբր.՝ עֵדוּת), որոնք պարունակում էին աստվածային պատվիրանները:

Տապանակի վերին մասը ծածկվում էր մաքուր ոսկուց պատրաստված կապպորեթով (եբր.՝ כַּפֹּרֶת՝ քավության կափարիչ): Դրա երկու ծայրերին տեղադրվում էին ոսկյա երկու քերովբեներ, որոնց դեմքերն իրար էին ուղղած, իսկ տարածված թևերը ծածկում էին կափարիչը (Ելք 25:17–20): Քավության կափարիչը կարևոր դեր ուներ նաև Քավության օրվա ծիսակարգում, երբ քահանայապետը դրա վրա և դրա առջև կատարում էր քավության արարողությունը (Ղևտ. 16:2, 14–15):

Քերովբեների նշանակության մեկնաբանությունը գիտական քննարկման առարկա է: Ի տարբերություն Գ Թագավորաց 6:23–28-ում և 8:6–7-ում նկարագրված՝ տաճարում տեղադրված հսկայական քերովբեների՝ Քահանայական ավանդության մեջ դրանք տապանակի կափարիչի մաս են կազմում: Այս նկարագրության մեջ տապանակը հստակորեն ներկայացվում է որպես վկայության տախտակների պահոց, և դրա վրա Աստծու գահի առկայությունը ուղղակիորեն չի հաստատվում: Աստված Մովսեսին հայտնում է, որ հանդիպելու է նրա հետ քավության կափարիչի վերևից՝ երկու քերովբեների միջից (Ելք 25:22): Հետևաբար, տապանակն այստեղ ոչ այնքան Աստծու գահն է, որքան աստվածային հայտնության և ժողովրդի հետ հաղորդակցության վայրը:

Քահանայական ավանդության առանձնահատկություններից է նաև տապանակի՝ աստվածային անվան հետ կապակցման բացակայությունը: Ի տարբերություն այլ աստվածաշնչյան ավանդույթների՝ այստեղ այն հիմնականում կոչվում է «վկայության տապանակ»: Սա կապված է էդութ եզրույթի կիրառության հետ, որը վերաբերում է ոչ թե բուն Ուխտին, այլ դրա վկայությունը հանդիսացող տախտակներին (Ելք 25:16, 21, 26:33–34, 30:6): Հետևաբար, տապանակի նշանակությունը կենտրոնանում է ոչ թե աստվածային ներկայությունը որևէ առարկայով սահմանափակելու, այլ Ուխտի վկայությունը պահպանելու վրա:

Այս տարբերակումը կարևոր աստվածաբանական հետևություն ունի. տապանակը կարող էր կորսվել կամ ոչնչացվել, սակայն դա չէր նշանակի Աստծու ուխտի վերացում: Քահանայական ավանդության մեջ ուխտը ներկայացվում է որպես հավիտենական (Ծննդ. 9:8–17, 17:1–27), իսկ դրա վավերականությունը կախված չէ որևէ նյութական առարկայի գոյությունից: Այսպիսով՝ տապանակը Ուխտի վկայության պահոցն է, մինչդեռ բուն ուխտը մնում է Աստծու և ժողովրդի միջև հաստատված անխախտ հարաբերություն:

Տապանակը Մնացորդաց գրքերում

Մնացորդաց գրքերում Ուխտի տապանակի մասին հիշատակումները հիմնականում հիմնվում են Դավթի և Սողոմոնի օրոք դրա տեղափոխության վերաբերյալ ավելի վաղ աստվածաշնչյան ավանդույթների վրա: Սակայն այս գրքերում առկա են նաև առանձնահատկություններ, որոնք ընդգծում են տապանակի պաշտամունքային նշանակությունն ու դրա սպասավորության կարգը:

Հատուկ շեշտվում է, որ տապանակը տեղափոխելու և դրա սպասավորությունն իրականացնելու իրավասությունը պատկանում էր քահանաներին ու ղևտացիներին (Ա Մնաց. 15:2, 12, 16:4): Հիշատակվում են նաև տապանակի դռնապաններն ու երաժշտական սպասավորները (Ա Մնաց. 16:37–42): Այսպիսով՝ տապանակի պաշտամունքը ներկայացվում է որպես կանոնակարգված ծիսական ծառայություն:

Մնացորդաց գրքի հեղինակը տապանակի՝ պաշտամունքային կենտրոնական նշանակության վերականգնումը կապում է Դավթի գործունեության հետ: Նա նշում է, որ Սավուղի օրոք տապանակի նկատմամբ պատշաճ ուշադրություն չէր ցուցաբերվում, մինչդեռ Դավիթը ձեռնարկեց այն վերադարձնելու և համապատասխան պաշտամունքային կարգ հաստատելու գործը (Ա Մնաց. 13:3–4): Այս մոտեցումը համահունչ է Սաղմոս 132-ում արտահայտված ավանդությանը, ըստ որի՝ Դավիթը ձգտում էր Տիրոջ համար բնակության արժանի վայր պատրաստել (Սաղմ. 132:1–5): Այդ սաղմոսից հատված է մեջբերվում նաև Սողոմոնի աղոթքում (Բ Մնաց. 6:41–42):

Սողոմոնի օրոք տապանակի տեղափոխությունը տաճար Մնացորդաց գրքում ներկայացվում է ավելի մանրամասն, քան Գ Թագավորաց գրքում (Բ Մնաց. 5:2–14): Այս նկարագրության մեջ ևս ընդգծվում են ղևտացիների մասնակցությունը, ծիսական երաժշտությունն ու տաճարի օծումը՝ տապանակի պաշտամունքային կարևորությունը հաստատելով Երուսաղեմի տաճարի կենտրոնական դերում:

Տապանակի հիշատակումները Նոր Կտակարանում

Հունարեն *կիբոտոս* (հուն.՝ κιβωτός) բառը, որը եբրայերեն արոն բառի համարժեքն է, Նոր Կտակարանում հանդիպում է վեց անգամ: Այդ հիշատակումներից միայն երկուսն են վերաբերում Ուխտի տապանակին (Եբր. 9:3–5, Հայտն. 11:19), իսկ մյուսները՝ Նոյի տապանին: ➥ *Էջ 8*

Նոյեմբերի 9-ի պատգամը և հաղթանակներից դաս չքաղելու հետևանքները

Մենք չկարողացանք դասեր քաղել մեր հաղթանակներից: Անխնա վատնեցինք ի վերուստ մեզ շնորհված տերունական պարգևը, և այն հետ վերցվեց մեզանից: Այսօր պարտավոր ենք առնվազն մեր պարտությունից խրատվելու, քանզի այն ազգը, որը չի գիտակցում իրեն պատուհասած վշտերի ու փորձությունների խորքային պատճառները, դատապարտված է ապագայում կրկին առերեսվելու դրանց հետ:


Պարտություններից ու աղետներից դասեր քաղելը սոսկ հետաքրքրասիրության հարց չէ, այլ կենսական անհրաժեշտություն: Մի՞թե բժիշկը հիվանդին հետազոտում է պարապ հետաքրքրությունից դրդված, ոչ թե ախտի բուն պատճառը հայտնաբերելու, այն արմատապես բուժելու և հետագա բարդությունները կանխելու համար: Չէ՞ որ եթե պարզվում է՝ լյարդի ախտահարման պատճառը գինեմոլությունն է, մարդը պարտավոր է հեռու մնալ ալկոհոլից: Եթե թոքերի հիվանդության պատճառը ծխախոտն է, ապա ապաքինման միակ ճանապարհը ծխելուց անհապաղ հրաժարվելն է: Նույն օրինաչափությամբ՝ այն ժողովուրդը, որը չի քննում և չի իմաստավորում իրեն բաժին հասած արհավիրքների պատճառները, նաև գալիքում չի կարող զերծ մնալ դրանցից:

Դժվար է պատկերացնել որևէ հայի, ով կցանկանար տեսնել Նոյեմբերի 9-ի ողբերգության կրկնությունը: Ուստի եկեք այս իրողություններին նայենք հոգևոր տեսանկյունից և Սուրբ Գրքի լույսի ներքո, որպեսզի ճշմարիտ հետևություններ անենք, արժանանանք նոր հաղթանակների, ազգային վերելք ապրենք և ժառանգենք հավիտենական կյանքը:

Որպես խորհրդածության սկիզբ՝ հիշենք Նիկոլայ Սերբացու՝ Դախաուի համակենտրոնացման ճամբարից սերբ ժողովրդին հղած նամակի առաջին տողերը.

«Մենք վիրավորել ենք Տիրոջը և պատժվել: Մենք պղծվել ենք բազմաթիվ անօրինություններով ու հիմա լվացվում ենք արյունով ու արցունքներով: Մենք ոտնակոխ ենք արել այն ամենը, ինչ սրբազան էր մեր հայրերի համար, և հիմա մենք ինքներս ենք ոտնակոխ արված»: Այս խոսքերն ասես մեր այսօրվա իրականության հայելին լինեն:

Սուրբ Գրքում մեր Երկնավոր Հայրը բազմիցս զգուշացնում է Իր ժողովրդին, որ փորձություններն



ու պատուհասները պատահական-ություն չեն, այլ ունեն խոր հոգևոր և բարոյական պատճառներ: Երբ ժողովուրդը չի գիտակցում այդ պատճառները, չի ապաշխարում և չի սրբագրում իր ընթացքը, պատմությունը կրկնվում է նույն կամ առավել սաստիկ ցավով:

Ահա թե ինչ է վկայում Աստծու խոսքը պատերազմներից ու պատուհասներից դասեր չքաղելու հետևանքների մասին. «Բայց եթե չլսեք ինձ և չկատարեք իմ այս բոլոր հրամանները, այլ արհամարհեք դրանք, իմ կարգադրություններից ձանձրանալով՝ չկատարեք իմ պատվիրանները ու լուծարեք իմ հաստատած ուխտը, ապա ես նույնը կանեմ ձեր նկատմամբ. տագնապալից տարակույսների կմատնեմ ձեզ, քոսով ու դեղնախտով կհիվանդացնեմ ձեզ, որ պակասի ձեր աչքի լույսը, և դուք հալումաշ լինեք: Այնժամ զուր տեղը պիտի ցանեք ձեր սերմերը, և այն ձեր հակառակորդները պիտի ուտեն: Ես իմ հայացքը ձեր դեմ պիտի հառեմ, և դուք պիտի ընկնեք ձեր թշնամիների առաջ: Ձեզ ատողները ձեզ պիտի հալածեն, և դուք փախստական պիտի լինեք, եթե անգամ որևէ մեկը չհալածի ձեզ: Եթե այդքանից հետո էլ ինձ չլսեք, ձեր գործած մեղքերի համար յոթնապատիկ ավելի պիտի պատժեմ» (Ղևտ. ԻՋ 14–18):

Այսպես՝ Սուրբ Գիրքն ուսուցանում է, որ սեփական մոլորությունների և Աստծու հանդեպ անհնազանդության պատճառները չգիտակցելը հանգեցնում է պատիժների կրկնությանն ու առավել խստացմանը: Իսկ Եսայու մարգարեության Թ-ժ գլուխներում ակնատես ենք լինում մի ահավոր օրինաչափության. քանի դեռ ժողովուրդը զղջումով դարձի չի գալիս առ Աստված, հարվածներն ու պատուհասները ոչ թե դադարում, այլ շարունակաբար բազմապատկվում են:

Հիշողության կորուստը՝ ազգային վշտերի սկզբնապատճառ

Մենք մոռացության մատնեցինք, թե ինչպես էին նախկինում մեր գլխին կուտակվել ճգնաժամերն ու արհավիրքները: Այս առումով Բ Օրինաց գրքում (Ը 11, 19–20) Աստծու խոսքը սթափեցնող հիշեցում է հղում. «Զգույշ եղիր, չլինի թե մոռանաս Տիրոջը՝ քո Աստծուն... Եվ եթե պատահի, որ մոռանաս Տիրոջը՝ քո Աստծուն, և գնաս օտար աստվածների հետևից... այսօր երդվում եմ երկնքով ու երկրով, որ դուք անհետ կկորչեք»:

Սա չափազանց խիստ զգուշացում է: Սակայն փոխանակ այդ օրհասական պահերին հոգեպես ճգնելու և ապաշխարելու (չէ՞ որ հենց այդ արմատից է ծագում «ճգնաժամ»՝ ճգնելու ժամ բառը), մենք, ցավոք, տրվեցինք հպարտությանը և շարունակեցինք մեր անաստված ու անօրեն ընթացքը:

Նույն խորհուրդն է ամփոփված նաև Ճե սաղմոսում. «Մեր հայրերը Եգիպտոսի մեջ չհասկացան քո սքանչելիքները և չհիշեցին քո անհուն ողորմությունը: Քեզ բարկացրին Կարմիր ծովն անցնելիս... Մոռացան իրենց կենարար Աստծուն, որ մեծ գործեր կատարեց Եգիպտոսում, Իր սքանչելիքները՝ Քամի երկրում, և Իր ահը՝ Կարմիր ծովի վրա»:

Այս խոսքերն ասես ուղղակիորեն մեր մասին լինեն. «Մեր հայրերն ու մենք չըմբռնեցինք, թե ինչպիսի՛ հրաշքով Տերը մեզ որպես ժառանգություն պարգևեց Արցախը, և չարժևորեցինք, թե ինչպիսի՛ անսահման ողորմությամբ մեզ շնորհեց Հայաստանի անկախ պետականությունը: Մենք բարկացրինք Աստծուն թե՛ Արցախում, թե՛ Հայաստանում, թե՛ սփյուռքում և մոռացանք մեր Փրկչին՝ Հիսուս Քրիստոսին, և Նրա այն բոլոր սքանչելի գործերը, որ կատարեց մեր ազգի համար»:

Հարվածի պատճառը ճանաչելու անհրաժեշտությունը

Երբ մարդուն կամ ազգին հարվածներ են հասնում, անհրաժեշտ է խորապես քննել սեփական ընթացքը և ճանաչել այդ հարվածի բուն պատճառը՝ հարցնելով՝ ինչո՞ւ Աստված թույլ տվեց այս փորձությունը:

Աստծու խոսքը Միքիայի մարգարեության մեջ հնչում է քաղաքի վրա և կոչ անում. «Լսի՛ր, ա՛զգ, ո՞վ է հանդերձավորելու քաղաքը» (Միք. Զ 9): Իսկ Ովսեեի մարգարեության մեջ տեսնում ենք, որ եթե ժողովուրդը չի գիտակցում և չի վերլուծում սեփական վարքի հետևանքները, ապա պատուհասները դառնում են անխուսափելի ու կրկնվող. «Նրանց բոլոր չարիքները հիշեցի. արդ, նրանց խորհուրդները պաշարեցին նրանց, եղան իմ երեսի առաջ» (Ովսե է 2):

Ինչպես ապաքինվել ու դարմանել ազգային վերքերը

Այսօր պարտավոր ենք գիտակցել, որ մեր բոլոր տառապանքների ու ողբերգությունների արմատը սկսվում է այն պահից, երբ մարդը լռեցնում է սեփական խղճի ձայնը, դավաճանում է իր իսկ դավանած հավատքին և հեռանում Քրիստոսի Ավետարանի պատվիրաններով ապրելու կոչումից:

Մեզանից յուրաքանչյուրի սրտում խղճի մաքրությամբ ապրելը, ամեն մի թեկուզ փոքր բարոյական հաղթանակը, երբ մարդը, ունենալով անօրինություն կամ չարիք գործելու հնարավորություն, վճռականորեն ասում է. «Ո՛չ, ես դա չեմ անի», մեծագույն բարիք է և երկնային օրհնություն է բերում մեր ողջ ազգին: Եվ ճիշտ հակառակը՝ մեզանից յուրաքանչյուրի ներքին բարոյական պարտությունը՝ սուտը, խաբեությունը, կաշառակերությունը կամ ցանկացած անազնվություն, արյունահոսող վերք է դառնում ողջ հասարակության և համայն հայության մարմնի վրա:

Եկեք մեր անձնական մեղքերով այլևս չխոցենք ինքներս մեզ և նոր վերքեր չհասցնենք մեր բազմաչարչար հայոց ազգին: Աստծու խոսքը հստակ սովորեցնում է, որ ցանկացած ժողովրդի պատուհասած աղետ անհնար է հաղթահարել կամ կանխել ապագայում, քանի դեռ արմատապես չի բացահայտվել և չի վերացվել դրա բարոյական ու հոգևոր պատճառը: Եվ այսօր մեզանից յուրաքանչյուրի անձնական պարտքն է՝ քննել սեփական սիրտը և արմատախիլ անել մեղքը հենց մեր ներսում:

Հիշենք Սոդոմի և Գոմորի ճակատագիրը: Եթե այնտեղ գտնվեր գեթ տասը արդար մարդ, քաղաքը չէր կործանվի: Աբրահամն իր բարեխոսությունն սկսեց հիսուն արդարից և իջավ մինչև տասը, որից հետո Տերն ավարտեց խոսակցությունն Աբրահամի հետ և հեռացավ (Ծննդ. ԺԸ 33): Սա վկայում է, որ գոյություն ունի հոգևոր մի սահմանագիծ. երբ ազգը հատում է այդ սահմանը, սկսվում է մեծ պատուհասը:

Եկեք մեզանից յուրաքանչյուրը ձգտի դառնալ այդ արդարներից մեկը: Ապրենք արդարությամբ, սիրով ու կարեկցանքով՝ թույլ չտալով, որ մեր սրտում բույն դնեն կեղծիքն ու ագահությունը: Երբ գայթակղության ու կրքի առջև կանգնած քրիստոնյան վճռականորեն մերժում է մեղքը, նա իրական հոգևոր հաղթանակ է կերտում: Հենց այդպիսի լուռ, բայց հաստատուն հաղթանակներն են, որ ամոքում ու դարմանում են մեր ազգի վերքերը և մոտեցնում մեզ փրկությանը:

Եվ չմտածենք, թե քիչ ենք, կամ թե մի քանի հոգու ջանքով ոչինչ չի կարող փոխվել: «Դուք եք երկրի աղը»,– ասում է Տերը (Մատթ. Ե 13): Ամբողջ կերակուրին համ տալու համար մի ամբողջ աման աղ հարկավոր չէ. ընդամենը մի քանի պտղունցն էլ բավական է:

Եկեք սկսենք մեզանից, հենց այսօր: Հենց մենք լինենք առաջին պտղունց աղը՝ համ տալու կյանքին հայոց հողի վրա:

Արմեն կիսասարկավագ Հարեյան

Ուխտի տապանակի գերեվարումն ու Տիրոջ զորությունը

↩ էջ 5

Եբրայեցիներին ուղղված թղթի 9-րդ գլխում տապանակը նկարագրվում է Հին Ուխտի պաշտամունքային համակարգի համատեքստում: Այն գտնվում էր խորանի ներքին՝ երկրորդ վարագույրի հետևում և պատված էր ոսկով: Դրա մեջ էին մանանայով լի ոսկե սափորը, Ահարոնի ծաղկած գավազանը և Ուխտի տախտակները, իսկ վերևում՝ քավության կափարիչը՝ քերովբեներով (Եբր. 9:3–5): Այս նկարագրությունը որոշ մանրամասներով տարբերվում է Հին Կտակարանի պատմություններից. մասնավորապես Քահանայական ավանդության մեջ մանանայով սափորը և Ահարոնի գավազանը ներկայացվում են որպես Վկայության առջև դրված առարկաներ (Ելք 16:33–34, Թվ. 17:10):

Հատկանշական է, որ Եբրայեցիներին ուղղված թղթում քավության կափարիչի համար գործածվում է հունարեն *հիլաստերիոն* (հուն.՝ ἱλαστήριον) բառը: Նույն եզրույթը հանդիպում է նաև Հռոմեացիներին 3:25 տողում, սակայն այնտեղ դրա իմաստը միանշանակ չէ. այն կարող է մատնանշել քավության միջոցը կամ քավության կափարիչի խորհրդանշական նշանակությունը:

Հայտնություն 11:19-ում հիշատակվում է «Աստծու Ուխտի տապանակը», որը հայտնվում է երկնային տաճարում: Տեսիլքին ուղեկցող կայծակները, ձայները, որոտը, երկրաշարժն ու կարկուտը ներկայացնում են աստվածային հայտնության և զորության դրսևորումը: Այսպիսով՝ տապանակը կրկին կապվում է Աստծու ներկայության և ուխտի հետ՝ այս անգամ երկնային, վախճանաբանական տեսիլքի շրջանակում:

Նոր Կտակարանի այս երկու հիշատակումները ցույց են տալիս, որ Ուխտի տապանակը շարունակում էր պահպանել իր խորհրդանշական նշանակությունը՝ որպես Հին Ուխտի պաշտամունքի և աստվածային ներկայության հետ կապված սրբազան առարկա:

Ալբերտ սրկ. Սահակյան
Արմեն Սահակյան

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝ Նշան Աբասյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հեռախոս՝ (010) 517 280

Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am

web կայք՝ www.armenianchurch.org

Ստոր. տպագր. 16.11.2026 թ.